

Ընթերցողների դատին ենք հանձնում «Ազգային Միաբանություն Կուսակցության» նախագահ, հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Արտաշես Գեղամյանի մտորումները հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման մասին:

Представляем на суд читателей размышления председателя партии Национальное Единение, видного общественно-политического деятеля Арташеса Гегамяна о нормализации армяно-турецких отношений, об урегулировании Нагорно-карабахского конфликта.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

... ԵՎ ՈՒՐԵՄՆ ԱԶԳՈՎԻ ԳԵԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԾԱԿԱՏԱԳՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ .....

ВСТАНЕМ ВМЕСТЕ ЛИЦОМ К СУДЬБЕ ... ..

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ. ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՄԵԾ ՊԱՐՏԻԱ .....

ЮЖНЫЙ КАВКАЗ: ВЕЛИКАЯ ШАХМАТНАЯ ПАРТИЯ .....

... ԵՎ ՈՒՐԵՄՆ ԱԶԳՈՎԻ ԳՆԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Եվ այսպես, ս.թ. հուլիսի 10-ին իտալական Ակվիլա քաղաքում Մեծ ութնյակի (G-8) մասնակից երեք երկրների նախագահները՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևը, ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ հանդես եկան համատեղ հայտարարությամբ:

Հայտարարության հիմքում դրված էին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ ՌԴ-ի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների կողմից 2007 թ. նոյեմբերի 29-ին Մադրիդում ընդունված Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման նախնական հիմնարար սկզբունքները: Ուշագրավ է, որ նախագահները ընդգծում են, որ այդ փաստաթղթում արտացոլված է 1975 թ. Հելսինկիում Անվտանգության ու Համագործակցության հորիզոնի Եզրափակիչ Ակտում տեղ գտած երեք հիմնարար սկզբունքները. դրանք են՝ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության պահպանման, հավասարության ու ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքները: Սկզբունքներ, որոնց շրջանակում էլ պետք է գալ խելամիտ փոխզիջումների: Հարկ է նշել, որ նախագահներ Մեդվեդևը, Օբաման, Սարկոզին Մադրիդյան հիմնական սկզբունքներից, ի թիվս այլոց, կարևորել և Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին կոչ են արել՝ Լեռնային Ղարաբաղին հարակից տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողությանը, Լեռնային Ղարաբաղին ժամանակավոր կարգավիճակի տրամադրում, վերջինիս անվտանգությունն ու ինքնակառավարման ապահովում, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ կապող միջանցքի ստեղծում, ԼԴ-ի իրավունքը՝ իրավաբանական բնույթի կամարտահայտման միջոցով որոշելու իր վերջնական կարգավիճակը, բոլոր փախստականների և բռնի տեղահանվածների՝ իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք, միջազգային անվտանգության երաշխիքներ, որոնք ենթադրում են խաղաղարար առաքելություններ: Մեդվեդևի, Օբամայի, Սարկոզիի համատեղ

հայտարարության մեջ ասված է նաև, որ Հայաստանի ու Ադրբեջանի կողմից Մադրիդյան հիմնական սկզբունքների ընդունումը հնարավորություն կընձեռի պատրաստել համընդհանուր կարգավորման նախագիծ, որը երկու երկրներին և ողջ տարածաշրջանին կապահովի խաղաղ ապագա, կայունություն ու բարգավաճում:

Մինչ այս հայտարարությանը գնահատական տալը փորձենք պարզաբանել, թե ինչո՞վ էր դրա ընդունումը պայմանավորված, ի՞նչ էր դա ազդարարում մեր երկրներին, ինչպես նաև մեր հարևաններին՝ Իրանին, Թուրքիային, Վրաստանին: Եվ, վերջապես, նշված սկզբունքների հիման վրա ընդունված խաղաղության պայմանագիրն աշխարհաքաղաքական հնարավոր ինչպիսի՞ զարգացումներ կարող է առաջացնել Հարավային Կովկասում:

Առաջին եզրակացությունը, որն անհրաժեշտ է արձանագրել, այն է, որ ԱՄՆ-ը, Եվրամիությունը և ՌԴ-ը խիստ կարևորում են Հարավային Կովկասի նշանակությունը սեփական երկրների աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից՝ խնդիր ունենալով ամրապնդվել մեր տարածաշրջանում:

Երկրորդ հետևությունը, որը պետք է արվի, այն է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմանն ուղղված Մադրիդյան սկզբունքները փոխզիջումային են ոչ այնքան Հայաստանի ու Ադրբեջանի, որքան հենց նույն համաշխարհային ուժի այդ երեք կենտրոնների՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի և Եվրամիության համար: Այս ակնհայտ ճշմարտության գիտակցումից ելնելով էլ՝ Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի բանակցային գործընթացում պետք է կառուցի իր ռազմավարությունն ու մարտավարությունը թե՛ բուն բանակցությունների ժամանակ, թե՛ ժողովրդական դիվանագիտություն իրականացնելիս և, որ պակաս կարևոր չէ, երկրի ներսում կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, երիտասարդության, մտավորականության հետ համագործակցելիս՝ խնդիր ունենալով մշակել միասնական, փոխլրացման սկզբունքի վրա խարսխված քաղաքականություն: Դա նշանակում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման խնդրի շուրջ ցանկացած քաղաքական ուժ, լինի դա իշխանություն, թե ընդդիմություն, հասկանալով հարցի ճակատագրական նշանակությունը մեր

պետության համար, պարտադրված է փոխհամաձայնության գալ: Դրանով կբացառվի հակամարտող հակառակ կողմի մոտ գայթակղությունը միջնորդավորված ձևով հովանավորել հայաստանյան այս կամ այն կուսակցությանը, քաղաքական գործչին, գործելու ի վնաս հարցի հայանպաստ լուծումներին, այսինքն՝ նպատակ ունենալ մեր տարածաշրջանում ապահովել սեփական երկրների շահերը: Շահեր, որոնք շատ դեպքերում կարող են մեզ համար խիստ անընդունելի լինել:

ԼՂՀ-ի բանակցային գործընթացի այս ֆոնի վրա արված համառոտ մեկնաբանություններից հետո, կարծում են, որ առաջիկայում խնդրո առարկայի վերաբերյալ քննարկումները կդառնան ավելի նպատակային և կներառեն մեր երկրի համար ընդունելի հարցեր: Օրինակ, որո՞նք են ԱՄՆ-ի գերակա խնդիրները Չարավային Կովկասում, արդյո՞ք դրանք պայմանավորված են Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի էներգետիկ պաշարների տեղափոխման այլընտրանքային հնարավորություններով: Կամ՝ ինչպիսի՞ հնարավոր զարգացումներ կարող են լինել մեր տարածաշրջանում՝ պայմանավորված Ամերիկա-Իրան հարաբերությունների հետագա զարգացումներով, ինչպե՞ս են Ամերիկայի Միացյալ Նահանգները պատկերացնում Թուրքիայի դերակատարությունը Չարավային Կովկասում և, վերջապես, այս և այլ հարցերի լույսի ներքո ԱՄՆ-ը ի՞նչ է ակնկալում Չայաստանից ու Ադրբեջանից: Ինքնին հասկանալի է, որ այս բոլոր հարցերի լուծումներն իրենց ամբողջականության մեջ, անտարակույս, պետք է համահունչ լինեն ԱՄՆ-ի շահերին: Նույնաբովանդակ հարցադրումներ պետք է արվեն՝ ելնելով ՌԴ-ի և Եվրամիության տեսանկյուններից: Մեր մոտեցումներն ավելի լիարժեք լինելու համար հարկ է վերլուծել, թե որո՞նք են Իրանի Իսլամական Չանրապետության, Թուրքիայի և Վրաստանի կողմից հետապնդվող խնդիրներն ու աշխարհաքաղաքական նախասիրությունները: Հիշատակված հարցերի պատասխաններն ունենալուց հետո անհրաժեշտ է պարզել, թե նախագահներ Մեդվեդևի, Օբամայի ու Սարկոզիի արված համատեղ հայտարարությունում Մադրիդյան որ սկզբունքի կիրառումը ինչ պարագայում և ինչ մեկնաբանությամբ կարող է նպաստել կամ խոչընդոտել համանախագահողների երկրների շահերին մեր տարածաշրջանում: Ահա նման մոտոցումներ որդեգրելու դեպքում կարող ենք պատասխանել, թե

այսուհետ ինչպիսի՞ն պետք է լինի մեր դիվանագիտության, ինչպես նաև քաղաքական ուժերի գործունեության տրամաբանությունը: Միայն նման մանրակրկիտ վերլուծության արդյունքում կիրականացնենք գործառույթներ, որով մեր երկիրը հնարավորինս զերծ կպահենք բանակցային գործընթացում ոչ հայանպաստ անակնկալ զարգացումներից: Հակառակ պարագայում այն «բուռն» քննարկումները, որոնք շուրջ մեկ ամիս է ինչ ծավալվել են մեր մամուլում ու հեռուստատեսությամբ, և որտեղ հիմնականում խոսվում ու վերլուծվում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների հայտարարության մեջ ներառված վեց սկզբունքները, բանակցային գործընթացին կարող են պարզապես խանգարել: Ընթացող քննարկումները, չնչին բացառությամբ, հանգեցնում են ստեղծված իրավիճակի թյուրըմբռնմանը, պարզունականացմանը, ավելին, հնարավորություն են տալիս Մինսկի խմբի համանախագահներին շոշափելու Հայաստանի Հանրապետությունում գերիշխող, երբեմն լավ զարգացումներ չխոստացող տրամադրությունները, որոնք, ավա՛ղ, կրկնում են, միշտ չէ, որ լավագույնս կանդրադառնան Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործին:

Ստեղծված պայմաններում, կարծում են, շատ կարևոր է գտնել համանախագահող երկրների ղեկավարների հրապարակայնորեն արված այնպիսի հայտարարություններ, նրանց կողմից տրված սկզբունքային այնպիսի գնահատականներ, որոնք մենք կկարողանանք ծառայեցնել ի շահ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հայանպաստ կարգավորման: Թե չէ ստացվում է, որ բազմաթիվ հայ հռետորներ, իրար հերթ չտալով, փորձում են համոզել հանրությանը մեր ընդհանուր գործի արդարացիության մեջ, ասես թե, մրցում են միմյանց հետ, թե ով է ավելի մեծ հայրենասերը: Էլ չեն խոսում նրանց մասին, ովքեր իշխանություններին խրատաբանական կարծի դիրքորոշումներ են հրամցնում, դիրքորոշումներ, որոնք բացարձակապես և ոչ մի աղերս չունեն բանակցային իրական գործընթացների հետ: Կրկնում են, այս գործում մեր խնդիրն է Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ղեկավարների հրապարակայնորեն տված գնահատականները, արտահայտած սկզբունքային դիրքորոշումները, մոտեցումները, որոնք արվել են այլ հակամարտությունների վերաբերյալ և հատկապես Լեռնային Ղարաբաղի

հիմնահարցի կարգավորման շուրջ, ծառայեցնենք մեր երկրի շահերին: Իսկ նման հնարավորություններ, անշուշտ, կան և դրանք քիչ չեն:

Ակնհայտ է, որ մեր տարածաշրջանում ԱՄՆ-ի թիվ 1 դաշնակիցն է Թուրքիան, որը վերջին տարիներին Հարավային Կովկասում աննախադեպ ակտիվություն է դրսևորում, խնդիր ունենալով շեշտակիորեն բարձրացնել իր դերակատարությունը մեր տարածաշրջանում: Թուրքական կողմի ջանքերը, ի թիվս այլ խնդիրների լուծման, ուղղված են, նախևառաջ, Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի էներգակիրների տեղափոխումը դեպի Եվրոպա իր տարածքով իրականացնելուն: Խոսքը “Nabucco” գազատարի մասին է, որով նախատեսվում է տարեկան կտրվածքով շուրջ 32 մլրդ խորանարդ մետր գազ տեղափոխել Եվրոպա: Հայտնի է, որ այդ խնդրի լուծումը որոշակիորեն կմեղմի Եվրամիության անդամ երկրների էներգետիկական կախվածությունը Ռուսաստանից, ինչպես նաև կբարձրացնի Թուրքիայի դերակատարությունը Եվրոպային էներգակիրներով մատակարարելու գործում, առավել ևս եթե հաշվի առնենք նաև Բաքու-Թբիլիսի-Ջեյհան տարեկան 50 մլն տոննա նավթ տեղափոխող նավթատարի գործումը:

Թուրքական իշխանությունները շատ լավ հասկանում են, որ ձեռք բերելով տնտեսական նման կարևոր լծակներ հնարավորություն կունենան դրանք ծառայեցնել սեփական քաղաքական նպատակների իրագործմանը, որոնցից կարևորագույնն է՝ հասնել Թուրքիայի անդամակցությանը Եվրամիությանը: Բնականաբար, 7,5 մլրդ եվրո արժողության “Nabucco” գազատարի շինարարության օգտին է խոսում մեր տարածաշրջանում տևական խաղաղություն հաստատելու խնդրի լուծումը: Ասվածի լույսի ներքո խիստ արդիական է դառնում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման հարցը: Կասկածից վեր է, որ Թուրքիան ամեն կերպ կաջակցի այս հարցում իր բարեկամ երկիր Ադրբեջանին, հատկապես հաշվի առնելով վերջինիս որոշիչ նշանակությունը “Nabucco” ծրագրի իրականացման գործում: Հարկ է նշել, որ մեր տարածաշրջանում տևական խաղաղության հաստատման հարցերը առավել կարևորվեցին 2008 թ. օգոստոսի վրաց-հարավօսական հնգօրյա պատերազմից հետո: Հիշենք, որ պատերազմի ավարտից մի քանի օր անց Թուրքիան, ի դեմս վարչապետ Ռեջեփ Էրդողանի, հանդես եկավ կայունության ու զարգացման հարավկովկասյան

պլատֆորմի հռչակումով, որին մասնակից պետք է դառնային (ըստ թուրքական առաջարկի) Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան և Ռուսաստանը: Ինքնին հասկանալի է, որ թուրքական առաջարկի ընդունման պայմաններում զգալիորեն կբարձրանար այդ երկրի ներգործությունը Հարավային Կովկասում, ինչն էլ ինքնաբերաբար կհանգեցներ ՆԱՏՕ-ի և, անշուշտ, ԱՄՆ-ի ազդեցության ուժեղացմանը: Բնական է, որ նման զարգացումներն ամենևին էլ չէին բխում մեր ռազմավարական դաշնակից, բարեկամ Ռուսաստանի Դաշնության շահերից, որովհետև դա զգալիորեն կթուլացներ Ռուսաստանի դերակատարությունը մեր տարածաշրջանում: Անբարենպաստ նման գործառույթների դեպքում Հարավային Կովկասում ՌԴ-ի ազդեցության, թերևս, միակ գործոն կմնար Հայաստանի Հանրապետությունը, որտեղ տեղակայված է ռուսական, տարածաշրջանում այլևս եզակի, ռազմակայանը: Եթե մենք նկատի ունենանք զարգացումների նման տրամաբանությունը, ապա դա կհուշի, որ բանակցային գործընթացում ՀՀ-ն պետք է շարունակի պնդել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հայտնի այն 3 սկզբունքների կենսագործման վրա, որոնք մեր իշխանությունների կողմից բազմիցս հայտարարվել են և որոնք տեղ են գտել նաև խնդրո առարկայի շուրջ հուլիսի 10-ին համանախագահող երկրների ղեկավարները վերը նշված համատեղ հայտարարության մեջ: Այս համատեքստում շատ է արդիականացնում հայտարարության մեջ տեղ գտած 6-րդ սկզբունքի այն հատվածը, ուր ասվում է, որ Լեռնային Ղարաբաղի միջազգային անվտանգության երաշխիքները ենթադրում են խաղաղարար առաքելությունների իրականացում: Հասկանալի է, որ ՌԴ-ը գիտակցում է, որ բացառությամբ ՀԱՊԿ անդամ երկրների զինուժի խաղաղարար ցանկացած այլ ուժի մուտքը մեր տարածաշրջան, եթե անցանկալի կլինի Ռուսաստանի համար, ապա դա միանգամայն անընդունելի կլինի Իրանի համար: Այս հարցում խիստ կկարևորվի Իրանի Իսլամական Հանրապետության դերակատարությունը: Կասկածից վեր է, որ Իրանը կանի հնարավոր ամեն բան, որպեսզի բացառվի ՌԴ-ից բացի որևէ այլ երկրի, առավել ևս ռազմաքաղաքական որևէ այլ դաշինքի զինուժի տեղակայում հայ-ադրբեջանական հակամարտության գոտում, հայ-իրանա ու իրանա-ադրբեջանական սահմանի հարյուրից շատ ավելի կիլոմետր երկայնքով:

Ահա այս հարցերի համապատկերում էլ վարվող բանակցություններում պետք է կառուցվի հայկական կողմի ռազմավարությունը: Կարծում եմ, հասկանալի է, որ առաջարկված սկզբունքներից հիշատակված 6-րդը՝ հարցի կարգավորման ամենաառանցքայիններից է: Այդ սկզբունքի կիրառումը հավասարապես կարևոր է ինչպես Հայաստանի ու Ադրբեյջանի, այնպես էլ Ռուսաստանի, Իրանի ու Թուրքիայի համար: Այս իրողությունից շրջահայաց, համակողմանի եզրակացություններ անելու կարևորությունը դժվար է գերազնահատել:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի իրավունքի՝ իրավաբանական բնույթի կամարտահայտման միջոցով որոշելու իր վերջին կարգավիճակը սկզբունքին, ապա այստեղ անհրաժեշտ է, որ մենք մեր զինանոցում լիարժեքորեն օգտագործենք ՌԴ-ի արտաքին գործերի նախարարար Սերգեյ Լավրովի հրապարակային պնդումները: Պնդումներ, որոնք արվել էին ի հիմնավորում Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախության ճանաչման: Այսպես, 2008 թ. սեպտեմբերի 11-ին լեհական “Gazeta Wlborcza” հեղինակավոր թերթին տված հարցազրույցում Ս.Լավրովը հայտարարել էր. Հարավային Օսեթիան և Աբխազիան համաձայն ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի փաստացի եղել են անկախ պետություններ: Մենք պետք է քարոզչական լուրջ աշխատանք ծավալենք, որպեսզի ինչպես Մինսկի համանախագահող երկրների ղեկավարները, այնպես էլ միջազգային հանրությունը տեղեկացված լինի խնդրո առարկայի մանրամասներին՝ ՌԴ-ի արտգործնախարարի կողմից հիշատակված այդ օրենքի դրույթներին: Այսպես, 1990 թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդն ընդունել է N-1409-Վ օրենքը «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների դուրս գալու հարցերի կարգի մասին» (“О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР”): Այդ օրենքի հոդված 3-ում նշված է. «Միութենական հանրապետությունում, որն իր կազմում ունի ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար օկրուգներ, հանրաքվեն (ռեֆերենդումը) անցկացվում է առանձին յուրաքանչյուր ինքնավարությունում: Ինքնավար հանրապետությունների և ինքնավար միավորումների ժողովուրդներին վերապահվում է իրավունք ինքնուրույն լուծել ԽՍՀՄ-ում մնալու կամ կազմից դուրս եկող Հանրապետությունում,

ինչպես նաև սեփական պետաիրավական կարգավիճակի հարցադրում անելը» (Статья 3. В союзной республике, имеющей в своем составе автономные республики, автономные области и автономные округа, референдум проводится отдельно по каждой автономии. За народами автономных республик и автономных образований сохраняется право на самостоятельное решение вопроса о пребывании в Союзе ССР или в выходящей союзной республике, а также на постановку вопроса о своем государственно-правовом статусе): Այնպես որ հայկական կողմն ամեն հարմար առիթով պետք է հայտնի մեր երկրի համերաշխությունը Սերգեյ Լավրովի նման սկզբունքային դիրքորոշմանը՝ այն դարձնելով բանակցային գործընթացում մեր դիվանագիտության մեխանիզմները:

Այստեղ կարևոր է նաև հրապարակ հանել 1990 թ. հունվարի 18-ին ԱՄՆ-ի հեղինակավոր սենատորների կոչն ուղղված ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին, որտեղ, մասնավորապես, գրված էր. «Մենք կոչ ենք անում Ձեզ լուծել պրոբլեմը (Լեռնային Ղարաբաղի.- Ա.Գ.), որը բերեց ողբերգական իրադարձությունների, Լեռնային Ղարաբաղի ժողովրդին տալով իրավունք ազատ կատարելու ընտրություն սեփական քաղաքական և մշակութային կապերի համաձայն»: Կոչի տակ իրենց ստորագրություններն էին դրել սենատորներ Պիտեր Ուիլսոնը, Պոլ Սայմոնը, Լուրի Պրեսլերը, Կլեյբորն Պելը, ինչպես նաև ԱՄՆ 2004 թ. նախագահական ընտրություններում Ջորջ Բուշի հիմնական մրցակից, դեմոկրատ Ջոն Կերին: Կարծում եմ, որ մենք պետք է հորդորենք Ամերիկայի Միացյալ Նահանգների դեմոկրատական կուսակցության կողմից առաջադրված նախագահ Բարաք Օբամային՝ հարգել իր հեղինակավոր կուսակցի՝ Ջոն Կերիի և մյուս սենատորների դեռ 1990 թ. հայտնած պաշտոնական այս տեսակետը: Առավել ևս հարգալից վերաբերմունք դրսևորել 1989 թ. հուլիսի 19-ին ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների Կոմիտեի կողմից ընդունված «Լեռնային Ղարաբաղի շուրջ վեճի խաղաղ կարգավորմանն ուղղված ԱՄՆ-ի աջակցության մասին» բանաձևի պահանջների կատարման նկատմամբ: Բանաձևում, մասնավորապես, նշված է. «Խորհրդային Միության հետ երկկողմանի քննարկումների ժամանակ հանդես գալ Լեռնային Ղարաբաղի շուրջ վեճի արդարացի լուծման օգտին, որն ազնիվ կարտացոլի այդ շրջանի

*բնակչության կարծիքը*»: Այստեղ շատ կարևոր է նշել, որ այդ նույն փաստաթղթի մեկ այլ պարբերության մեջ նշված է, որ « ... առաջացրեց դժգոհությունների հետագա աճ (խոսքը ԼՂ-ի Հատուկ Կառավարման Կոմիտեի գործունեության մասին է- Ա.Գ.) այնտեղ բնակվող հայերի շրջանում, որոնք կազմում են տեղի բնակչության ճնշող մեծամասնությունը»։ Սենատոր Կլեյբորն Պելի նախաձեռնությամբ ԱՄՆ-ի Սենատի Արտաքին Հարաբերությունների Կոմիտեի կողմից ընդունված այս բանաձևը պետք է նույնպես մեր դիվանագիտության, ինչպես նաև պետական ողջ քարոզչամեքենայի կողմից օգտագործվի՝ խնդիր ունենալով քաջալերել ԱՄՆ-ի ներկայիս վարչախմբին՝ հավատարիմ մնալ Սենատի կողմից երկու տասնամյակ առաջ ընդունված բանաձևի ոգուն։

Խոսելով ԱՄՆ-ի գործող վարչակազմի մոտեցումների մասին անհրաժեշտ են համարում Մինսկի խմբի համանախագահող եռյակին հայտնել, որ մենք խիստ կարևորում ենք ս.թ. հուլիսի 23-ին Վրաստանի պառլամենտում ԱՄՆ-ի փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի ունեցած ելույթի հետևյալ դրույթները. «Որքան էլ դժվար լինի, կոչ են անում Ձեզ (Վրաստանի իշխանություններին- Ա.Գ.) բաց պահել դռները արխագացիների ու հարավօսեթացիների առջև ... Դա տխուր փաստ է, բայց վերամիավորվելու ռազմական ճանապարհ իրապես չկա։ Միայն խաղաղ ու ծաղկող Վրաստանը կունենա հեռանկար վերականգնել Ձեր տարածքային ամբողջականությունը, եթե նրանք, ովքեր ապրում են Աբխազիայում և Հարավային Օսեթիայում, տեսնեն, որ Վրաստանի կազմում նրանք կկարողանան լինել ազատ, իսկ իրենց համայնքներն էլ ծաղկող, որտեղ նրանք կօգտվեն ինքնավարությամբ դաշնային իշխանության համակարգի շրջանակում, որտեղ նրանց կյանքը կդառնա զգալի լավ, քան հիմա է»։ ԱՄՆ-ի իշխանությունները քանիցս հայտարարել են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմանը միտված իրենց անսասան սկզբունքային մոտեցման մասին, ուստիև Ջոզեֆ Բայդենի թբիլիսյան ելույթում հայտնված այդ մոտեցումը պետք է փորձել հիմնավոր կերպով ամբողջությամբ կիրառելի դարձնել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում՝ առաջարկելով հարգել փոխնախագահ Բայդենի արդարացի այդ բանաձևը և ներառել դա Մադրիդյան սկզբունքների նորացված տեքստում։ Առավել ևս

այս հարցում մենք պետք է հանդես գանք միասնական համազգային դիրքորոշմամբ, այն է՝ այս հարցում ցանկացած այլ մոտեցում հղի է պատերազմական գործողությունների վերսկսմամբ: Ավելին, ԱՄՆ-ի փոխնախագահի թբիլիսյան ելույթում հնչեցված սկզբունքային գնահատականից հետո դրան հակասող ցանկացած գործառույթ, եթե չդատապարտվի, ապա Ադրբեջանը կարող է ընդունել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու իր հավակնություններին տրված լռելյայն համաձայնություն: Չէ՞ որ մենք ականատեսն ենք, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն ասես միտումնավոր թե՛ իր երկրի ներսում, թե՛ արտասահմանում (վերջերս Լոնդոնում Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում՝ Chatham House-ում ունեցած ելույթը.- *Ա.Գ.*) շարունակաբար հանդես է գալիս հայտարարություններով՝ ռազմական ճանապարհով հասնել ԼՂ-ի հարցի լուծմանը: Եվ դա արվում է այն դեպքում, երբ անցյալ տարվա նոյեմբերի 2-ին նախագահներ Սարգսյանի, Մեդվեդևի և Ալիևի ստորագրությամբ ընդունվել էր Մայենդորֆյան հռչակագիրը, որտեղ վավերացված էր հակամարտող կողմերի պատրաստականությունը՝ հարցի լուծմանը հասնել միայն խաղաղ ճանապարհով: Այլ կերպ ասած՝ Ալիևը հրապարակավ անտեսում է այդ փաստաթղթի դրույթների կատարման երաշխավոր հանդիսացող Ռուսաստանի Դաշնության նախագահի նշանակությունն ու դերակատարումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու հարցում: Ջարմանք առաջացրեց այն, որ վերջերս Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար աբիևը Բաքվում՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովի հետ բանակցությունների ժամանակ հայտարարել էր. «Եթե հայ-ադրբեջանական հակամարտությունը չկարգավորվի խաղաղ տարբերակով, ապա ռազմական լուծումն անխուսափելի է»: Ցավոք, այդ ռազմատենչ հայտարարությունը, որը հակասում է ՌԴ նախագահի կողմից վավերացված Մայենդորֆյան հռչակագրի ոգուն, Ռուսաստանի պաշտպանության նախարարի կողմից մնաց անպատասխան: Կարծում եմ, չի կարելի թերագնահատել

Մայենդորֆյան հռչակագրի դերն ու նշանակությունը հատկապես Մինսկի խմբի ռուսաստանցի համաճախագահողի հետ քննարկումների ժամանակ:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի, իսկ ավելի լայն՝ Եվրամիության դիրքորոշումներին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործում, ապա գտնում են. տեղին կլիներ, եթե մենք Եվրոպայի մեր գործընկերներին հիշեցնեինք, որ միջազգային կազմակերպությունների և հատկապես Եվրամիության առանցքային երկրների ու ԱՄՆ-ի բոլոր տեսակի միջամտությունները, որոնք բերեցին Կոսովոյի անկախությանը, եթե համեմատելու լինեինք Արցախի ժողովրդի անցած ճանապարհի հետ (որը նա անցել է ինքնուրույն, առանց դրսի միջամտության), ապա Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը միջազգային իրավունքի տեսակետից շատ ավելի հիմնավոր ու անխոցելի է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացմանն անհրաժեշտ չի եղել ոչ ՄԱԿ-ի Ախտիսաարիի հանձնաժողովի նմանությամբ նորի ստեղծում, ոչ երկնագույն սաղավարտավորների, ոչ էլ ՆԱՏՕ-ի արագ արձագանքման զինված ուժերի ներգրավման անհրաժեշտություն: Ավելին, չէր խանգարի շրջանառության մեջ դնել ս.թ. մայիսի 22-ին ԱՄՆ-ի փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի Կոսովոյի պառլամենտում ունեցած ելույթից առանձին դրույթներ: Այսպես, ԱՄՆ-ի փոխնախագահը որպես անկախ Կոսովոյի նվաճում հիշատակել է այնպիսի ձեռքբերումներ, որոնք դեռ տարիներ առաջ էին իրենց լուծումը գտել Լեռնային Ղարաբաղում: Մասնավորապես, դրվատանքի էր արժանացել այն, որ Կոսովոյի պառլամենտն ընդունել է ավելի քան 50 օրենք: Ելույթում ասվել էր. «Դուք կառուցել եք ճանապարհներ, զրոյից ստեղծել եք նախարարություններ և պետական ծառայություններ, որոնք նախկինում գոյություն չուներին»: Այս ամենը 100%-ով կարելի է ասել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին: «Ձեր հաջողությունը նվաճված է համառ աշխատանքով,- շարունակել է Ջ.Բայդենը,- դուք ցուցադրեցիք ամբողջ աշխարհին, որ ժողովրդավարությունը և Կոսովոյի անկախությունը հանդիսանում են ուժ, որը նպաստում է տարածաշրջանում կայունության հաստատմանը, և այսպես էլ լինելու է հետո»: Լեռնային Ղարաբաղի հանրապետության կայացման օրինակը, կարծում են, շատ ավելի համոզիչ վկայությունն է ի հաստատումն Ջ.Բայդենի այն պնդման, որ միայն

ժողովրդավարություն որդեգրած Ղարաբաղի անկախ պետականությունը հնարավոր դարձրեց առանց միջազգային հզոր ուժերի աջակցության դիմակայել 30 անգամ ավելի մեծ թվաքանակով բնակչություն ունեցող, միլիարդավոր նավթային դոլարներ սպառազինության վրա ծախսող Ադրբեջանի ռազմական ոտնձգություններին: Ավելին, այն հարցերը, որոնց լուծմանն ուղղված կոչով է Կոսովոյում հանդես եկել Ջ.Բայդենը, Լեռնային Ղարաբաղում արդեն տարիներ շարունակ դրված են իշխանությունների ամենօրյա աշխատանքի հիմքում և կազմում են դրա բովանդակությունը: Ի մասնավորի, ԱՄՆ-ի փոխնախագահն իր այդ ելույթում ասում է. «Առաջին, մենք կոչ ենք անում Ձեզ, մենք համառորեն խնդրում ենք Ձեզ շարունակել ուժեղ ինստիտուտների շինարարությունը, ուր կմարմնավորվեն արժեքներ, որոնք ամրագրված են Ձեր անկախության հռչակագրում և ձեր Սահմանադրությունում: Այդ ինստիտուտների արդյունավետությունն ու թափանցիկությունը կունենան վճռական նշանակություն Ձեր կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման գործում առաջիկա ամիսներին ու տարիներին»: Լեռնային Ղարաբաղում այդ հարցերի լուծմանն են ուղղված արդեն իսկ տարիներ շարունակ իրականացվող պետական շինարարությանն ուղղված գործնական քայլերը, որոնց արդյունքները ցանկացած անկողմնակալ ուսումնասիրության պարագայում, համոզված են, շատ բարձր կգնահատվեն:

Բայդենի ելույթից կարելի է այլ հարցադրումներ էլ մեջբերել, սակայն այսքանից էլ կարող ենք եզրակացնել, որ Եվրամիության առանցքային երկրների և ԱՄՆ-ի ջանքերով անկախացած Կոսովոն նոր է սկսում իրագործել այն քայլերը, որոնք Լեռնային Ղարաբաղն արդեն իսկ տարիներ առաջ և ավելի մեծ հաջողությամբ իրագործել է և շարունակում է դա անել: Այսինքն, հաշվի առնելով այս իրողությունները և դրանից հետո պարտադրել Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետությանը այլընտրանքային որևէ կարգավիճակ, մեղմ ասած, կլիներ խիստ անտրամաբանական: Նախագահներ Մեդվեդևի, Օբամայի և Սարկոզիի համատեղ հայտարարության մեջ տեղ գտած երկրորդ (ԼՂ-ին ժամանակավոր կարգավիճակի տրամադրում, վերջինիս անվտանգության ու ինքնակառավարման ապահովում) և չորրորդ (ԼՂ-ի իրավունքը`

իրավաբանական բնույթի կամարտահայտման միջոցով որոշելու իր վերջնական կարգավիճակը) սկզբունքների շուրջ բանակցելիս դրական ազդեցություն կունենա այն, եթե հայկական կողմը առանձնահատուկ նշի Ջ.Բայդենի մայիսի 22-ին Կոստվոյի պառլամենտում ունեցած սկզբունքային գնահատականների խիստ արդիականությունը նաև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործում: Դրանց հակափաստարկներ բերելը դյուրին գործ չի լինի:

Մենք պետք է օգտագործենք նաև այն հանգամանքը, որ մինչև 2009 թ. ավարտը Եվրամիությունում նախագահելու է Շվեդիայի թագավորությունը, և այդ գործում շատ մեծ է լինելու այդ երկրի արտգործնախարար Կարլ Բիլդտի դերակատարությունը, որն որպես ԵՄ-ը նախագահող երկրի պաշտոնյա իր գործունեության առաջնայնություններից համարեց պաշտոնական այցով լինել Վրաստանում, Ադրբեջանում ու Հայաստանում: Եվ դա վերստին շեշտեց կարևորության այն բարձր աստիճանը, որ Եվրամիությունը տալիս է Հարավային Կովկասի երկրներին և մեր տարածաշրջանում ընթացող զարգացումներին: Ինչու են առանձնահատուկ հիշատակում Կարլ Բիլդտին, որովհետև ճիշտ և ճիշտ նույն Կարլ Բիլդտն է եղել Եվրամիության ներկայացուցիչը Բալկաններում, երբ այնտեղ կյանքի էր կոչվում Դեյտոնյան համաձայնագիրը՝ կրակի դադարեցման համաձայնագիր, հակամարտող կողմերի բաժանում և տարածքների առանձնացում, որով վերջ դրվեց 1992-95 թթ. Բոսնիայի և Հերցեգովինայի քաղաքացիական պատերազմին: Հիշեցնեմ, որ պայմանագրի դրույթները համաձայնեցվել էին ԱՄՆ-ի Դեյտոնի ռազմակայանում (նահանգ Օհայո), պայմանագիրը ստորագրվել էր 1995 թ. դեկտեմբերին Փարիզում: Լինելով ականատեսը Խորվաթիայի կողմից 1995 թ. ամռանն իրականացվող էթնիկական զտումների, երբ Խորվաթական զորքերի կողմից գրավված Սերբսկայա Կրաինայի շուրջ 300 հազար սերբեր դիմեցին փախուստի այն շրջաններից, որտեղ նրանք ապրել են հարյուրամյակներ, Կարլ Բիլդտը Խորվաթիայի նախագահ Ֆրանյո Թուշմանին անվանել էր Ռ.Կարաջիջին հավասար ռազմական հանցագործ: Ավելին, Կարլ Բիլդտը քաջատեղյակ է եղել նաև, որ Խորվաթիայի մայրաքաղաք Սարաևոյում Դեյտոնի համաձայնագրի կնքման պահին բնակվելիս են եղել 120-ից 150 հազար սերբեր, իսկ այսօր այդ

քաղաքում սերբեր պրակտիկորեն չեն ապրում: Եվրամիությունում նախագահող երկրի՝ Շվեդիայի արտգործնախարար Կարլ Բիլդտին անհրաժեշտ է փաստարկված ապացույցներ ներկայացնել, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը, Աստված մի արասցե, եթե հանկարծ հայտնվի Ադրբեջանի կազմում, ապա նրա հայ ազգաբնակչությանը սպասվում է Սերբսկայա Կրահնայի, Սարաևոյի սերբերի ճակատագիրը: Իրավիճակ, որը հայկական երկու պետությունները երբեք թույլ չեն տա, որ հնարավոր դառնա: Ավելին, պետք է բազմաթիվ փաստարկված հիմնավորումներով ներկայացվի այն ճշմարտությունը, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ելել էր ազատագրական պայքարի գիտակցելով, որ հակառակ պարագայում կարժանանա Նախիջևանի ճակատագրին, այն է՝ կհայաթափվի, իսկ պատմամշակութային հարստությունը կկողոպտվի ու կոչնչացվի: Անհրաժեշտ է հետևողականորեն պարզաբանել, որ հայկական կողմը ենթարկվելով զանազան ճնշումների, շատ համբերատար գործնականում ապացուցում է իր խորը հակվածությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գաղափարին: Ասվածի հավաստիությունը ներկայացնելու համար պետք է գործի դրվեն բազում հիմնավորումներ և ապացույցներ, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատագրական պայքարն եղել է ոչ այլ ինչ, քան Ադրբեջանի կողմից հայերի նկատմամբ իրականացվող էթնիկական զտմանն ուղղված քաղաքականության պատասխանը: Այս առումով բերեն ուշագրավ մի օրինակ «Բակինսկի ռաբոչի» թերթի 2002 թ. հուլիսի 25-ի համարում «Ձանգավածային լրատվական միջոցները պետք է լինեն ճշմարտության ազդարարը...» խորագրի ներքո հրապարակված նյութից: Հեյդար Ալիևը, Ադրբեջանի այն ժամանակվա նախագահը, ի լուր աշխարհի այդ թերթում հրապարակեց ճշմարտությունը Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ պաշտոնական Բաքվի կողմից վարվող քաղաքականության մասին: «Ես խոսում եմ այն ժամանակաշրջանի մասին,- ասում է Ալիևը,- երբ առաջին քարտուղար էի (նկատի ունի Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի.- Ա.Գ.). այդ ժամանակ շատ եմ օգնել Լեռնային Ղարաբաղի զարգացմանը: Միաժամանակ ջանացել եմ փոխել տեղի ժողովրդագրությունը: Լեռնային Ղարաբաղը հարց էր բարձրացրել ինստիտուտ, ԲՈՒՀ բացել: Մեզանում բոլորը դեմ էին դրան:

ես մտածեցի, որոշեցի բացել: Մերձակա շրջանների ադրբեջանցիներին սովորելու էինք ուղարկում ոչ թե Բաքու, այլ այնտեղ... Հիմնադրեցինք կոշիկի մեծ ֆաբրիկա: Մարզը շրջապատող վայրերից ադրբեջանցիներին ուղարկում էինք այնտեղ: Այս և այլ միջոցներով ես աշխատել եմ, որպեսզի Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների թվաքանակը մեծանա, իսկ հայերինը՝ նվազի»:

Ավելի բացահայտ չես ասի: Այդ տարիներին Ադրբեջանում իրականացվող ահա նման պետական քաղաքականության մեջ են թաքնված Ադրբեջանի հայաբնակ մի քանի տասնյակ քաղաքներից, գյուղերից ու շրջաններից ավելի քան կես միլիոն հայերի զանգվածային տեղահանման պատճառները: Պատմական հայրենիքից հայ ազգաբնակչությանը դուրս մղելու նման քաղաքականությունն էլ հանգեցրեց Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների ընդվզմանը, համաժողովրդական պայքար սկսելուն՝ իրենց ազգային ինքնորոշման իրավունքի հաստատման համար: Հաշվի առնելով այն, որ ներկայիս Ադրբեջանում Հեյդար Ալիևի անձի պաշտամունքի քաղաքականությունն է իրականացվում, ապա կասկածից վեր է, որ նրա որդին՝ Իլհամ Ալիևը, եթե Լեռնային Ղարաբաղը հայտնվի Ադրբեջանի կազմում, շարունակելու է, այն էլ էլ ավելի կատաղի, իր հոր վարած քաղաքականությունը:

Ահա այս բոլոր հարցերը նկատի ունենալով է, որ մենք պնդում ենք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության այլընտրանքը պատերազմն է: Եվ այս ակնհայտ իրողության պայմաններում հայկական կողմի վրա ճնշումներ գործադրելը, խնդիր դնելով, որ Հայաստանի Հանրապետությունը հրաժարվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության գաղափարից, դա նույնն է, հավասարազոր է նրան, որ պատասխանատվության վերցնել Հարավային Կովկասում, մեր տարածաշրջանում նոր պատերազմի հրահրման համար: Սա է իրականությունը:

Հնարավոր նման զարգացումների գիտակցումն է, որ հրամայական է դարձնում մեր ժողովրդի կոնսոլիդացման խնդիրը: Ցանկացած այլ գործողություն, որքան էլ բարեհունչ խոսքերով պարուրվի, ոչ այլ ինչ է, քան քաղաքական կարճատեսություն, եթե չասվի՝ տգիտության դրսևորում կամ էլ

քողարկված դավաճանություն: Նման քայլերը բոլորս պարտավոր ենք ի սկզբանե բացառել:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության պաշտպանությունը, միջազգայնորեն դրա ճանաչումը բոլորիս սրբազան պարտքն է, իսկ ավելի ճիշտ՝ դա մեր ճակատագիրն է: Եվ ուրեմն ազգովի գնանք Հայաստանի Հանրապետության ճակատագրին ընդառաջ:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

«Ազգային Միաբանություն կուսակցության»

նախագահ

## ВСТАНЕМ ВМЕСТЕ ЛИЦОМ К СУДЬБЕ ...

Итак, 10 июля сего года в итальянском городе Аквила президенты трех стран-участниц “Большой восьмерки”(G-8) Дмитрий Медведев (Российская Федерация), Барак Обама (США) и Николя Саркози (Франция) выступили с совместным заявлением по нагорно-карабахскому конфликту.

В основу заявления положены принятые министрами иностранных дел стран-сопредседателей Минской группы ОБСЕ (РФ, США, Франция) 29 ноября 2007 года в Мадриде предварительные принципы мирного урегулирования карабахского конфликта. Примечательно, что в заявлении президенты подчеркивают, что в этом документе “отражен разумный компромисс, основанный на принципах неприменения силы, территориальной целостности, равенства и самоопределения народов, которые изложены в Заключительном акте общеевропейского совещания по безопасности и сотрудничеству в Хельсинки (1975г.)”.

Следует отметить, что президенты Медведев, Обама, Саркози выделили 6 принципов и призвали президентов Армении и Азербайджана “устранить несколько остающихся разногласий между ними и завершить согласование этих основных принципов, которые составят план всеобщего урегулирования”.

Примечательно, что в основных принципах президентами делается призыв, среди прочего, к возвращению территорий вокруг Нагорного Карабаха под контроль Азербайджана, придания промежуточного статуса Нагорному Карабаху, гарантирующего безопасность и самоуправление, созданию коридора, связывающего Армению с Нагорным Карабахом, будущему определению окончательного юридического статуса Нагорного Карабаха путем юридически обязывающего выражения воли, праву всех внутренне перемещенных лиц и беженцев вернуться в свои прежние места проживания и международным гарантиям безопасности, которые включают проведение миротворческой операции. В заявлении президентов

Медведева, Обамы, Саркози также сказано, что принятие Основных принципов Арменией и Азербайджаном позволит подготовить проект всеобъемлющего урегулирования, которое обеспечит мирное будущее, стабильность и процветание обеих стран и всего региона.

Прежде, чем дать оценку вышеуказанному заявлению, попробуем уяснить, о чем оно извещает двум странам, а также нашим соседям – Ирану, Турции, Грузии. И, наконец, проанализируем какие возможные геополитические процессы может стимулировать в регионе Южного Кавказа заключение мирного соглашения на вышеуказанных принципах.

Первый вывод, который необходимо констатировать заключается в том, что США, Евросоюз и Россия придают весьма важное значение Южному Кавказу с точки зрения геополитических интересов своих стран, имея перед собой задачу дальнейшего закрепления в регионе.

Второй вывод, который необходимо сделать, заключается в том, что Мадридские принципы по урегулированию нагорно-карабахского конфликта для Армении и Азербайджана компромиссны не в той степени, в какой они компромиссны для вовлеченных в процесс мирного урегулирования трех международных центров силы: России, США и Евросоюза. Исходя из этой очевидной истины, Армянская сторона как тактику и стратегию переговорного процесса по урегулированию проблемы Нагорного Карабаха, так и сами переговоры (будь то осуществление народной дипломатии или, что не менее важно, проводя политику внутри страны с партиями, общественными организациями, молодежью, интеллигенцией) должна проводить, ставя перед собой задачу выработки единой политики, основанной на взаимных уступках и комплементаризме. Это означает, что в вопросе мирного урегулирования нагорно-карабахского конфликта любая политическая сила, будь она во власти или в оппозиции, осознавая судьбоносное значение вопроса для нашего государства, обязаны прийти к взаимному согласию. Этим у противоположной, конфликтующей с нами, стороны будет исключена возможность, соблазн опосредованно

поддерживать в Армении ту или иную партию, или политического деятеля в их действиях, которые идут во вред приемлемым для нас вариантам разрешения конфликта, то есть на деле преследуют цель защиты интересов третьих стран в нашем регионе. Интересов, которые во многих случаях могут быть абсолютно неприемлемыми для нас.

После подобных коротких разъяснений на фоне нагорно-карабахских переговорных процессов, полагаю, что в будущем обсуждения по существу данного вопроса станут более целенаправленными и вберут в себя более приемлемые и востребованные для нашей страны подходы. Например, каковы насущные интересы США в Южном Кавказе? Обусловлены ли они возможностями прокладки альтернативных (ныне действующим) маршрутов по переброске энергетических ресурсов из Центральной Азии и бассейна Каспийского моря в Европу? Или же, каковы возможные варианты изменения международного положения в нашем регионе, насколько они обусловлены дальнейшим ходом развития американо-иранских отношений, каковой США представляется роль Турции в Южном Кавказе и, наконец, в контексте этого и всех других вопросов, каковы чаяния американцев от Армении и Азербайджана? Само собой разумеется, что в своей совокупности разрешение всех этих вопросов, несомненно, должно быть созвучно интересам США. Подобного же рода вопросы должны быть нами поставлены и рассмотрены через призму интересов Российской Федерации и Евросоюза. Чтобы подходы нашей дипломатии были бы более полноценными, следует также проанализировать, а в чем интересы и геополитические пристрастия, отстаиваемые Исламской Республикой Иран, Турцией и Грузией? После получения ответов на вышеупомянутые вопросы, мы должны для себя уяснить: применение каких из принципов, содержащихся в совместном заявлении, сделанном президентами Д.Медведевым, Б.Обамой, Н.Саркози, и при каких условиях, а также в каком комментарии могут способствовать или препятствовать продвижению интересов стран-сопредседателей в нашем

регионе. Вот в этом случае, придерживаясь подобных подходов, мы сможем дать ответ: какова должна быть логика действий нашей дипломатии, политических сил республики. Только при таком скрупулезном анализе мы сможем осуществить действия, которые помогут Армении в ходе переговорного процесса предотвратить, избежать нежелательных сюрпризов. В противном случае, те “бурные” дискуссии, продолжающиеся вот уже около месяца в печати и на телевидении, в ходе которых, главным образом, анализируются представленные в заявлении стран-сопредседателей Минской группы ОБСЕ 6 принципов, могут просто помешать переговорам. Текущие обсуждения, за редким исключением, приводят к недопониманию, упрощенной оценке сложившейся в переговорном процессе ситуации, более того, сопредседателям Минской группы дают возможность прощупать настроения, преобладающие в республике. Следует отметить, что развернувшиеся дискуссии иногда не обещают формирование хороших настроений в обществе, что в свою очередь, увы, не всегда наилучшим образом служит делу приемлемого для Армении урегулирования конфликта по Нагорному Карабаху.

В сложившихся условиях, полагаю, что важно сослаться на такие публичные заявления руководителей стран-сопредседателей Минской группы, сделанные ими такие принципиальные оценки, которые можно было бы подчинить во благо справедливого решения вопроса Нагорного Карабаха. А то получается, что многочисленные армянские ораторы, не давая друг другу очереди, пытаются убедить нашу же общественность в справедливости нашего же общего дела, создавая впечатление, что соревнуются друг с другом в проявлении патриотизма. Я уже не говорю о тех, которые в форме жестких нравоучений предъявляют властям позиции, абсолютно ничего общего не имеющие с реальным переговорным процессом. Повторяю, в переговорном процессе наша задача заключается в использовании публично высказанных руководителями России, США, Франции, более широко-государств-членов Евросоюза, оценок,

обозначенных принципиальных позиции, подходов, которые ими были даны, проявлены при решении других конфликтов и, тем более относительно Нагорного Карабаха, поставив все это на службу интересов нашей страны. А такие возможности, безусловно, имеют место быть, притом в немалом количестве.

Так, очевидно, что союзником №1 для Соединенных Штатов Америки в нашем регионе является Турция. В последние годы эта страна развернула в регионе Южного Кавказа беспрецедентную активность, ставя перед собой задачу резкого увеличения своей роли в нашем геополитическом пространстве. Усилия турецкой стороны, помимо решения прочих задач, направлены прежде всего на реализацию проекта прокладки маршрута транспортировки энергоносителей из Центральной Азии и Каспийского моря в страны Евросоюза по своей территории. Речь идет о строительстве газопровода “Nabucco”, по которому предполагается ежегодная доставка в Европу около 32 млрд. кубометров газа. Известно, что реализация этого проекта в определенной мере смягчит энергетическую зависимость стран-членов Евросоюза от России, равно как и повысит роль Турции в снабжении Европы энергоносителями, тем более с учетом фактора ежегодной перекачки 50 млн. тонн нефти по нефтепроводу Баку-Тбилиси-Джейхан.

Турецкие власти очень хорошо осознают, что, заимев столь важные экономические рычаги, они получают возможность поставить их на службу реализации собственных политических целей, важнейшей из которых является принятие Турции в Евросоюз.

Естественно, что в пользу строительства газопровода “Nabucco”, имеющей стоимость 7,5 млрд. евро, выступает установление длительного мира в нашем регионе. В этом контексте сильно актуализируется вопрос мирного урегулирования нагорно-карабахского конфликта. Вне всяких сомнений, что Турция в этом деле всячески будет содействовать дружественному ей Азербайджану, особенно принимая во внимание

значение последнего в возможной реализации программы “Nabucco”. Следует отметить, что проблема установления длительного мира в нашем регионе особенно актуализировалась с августа 2008 г., а именно, после пятидневной грузино-югоосетинской войны. Вспомним, что спустя несколько дней после окончания войны, Турция, в лице премьер-министра Реджепа Таипа Эрдогана, выступила с декларацией о Платформе стабильности и развития в Южном Кавказе, участниками которой (по предложению Турции – А.Г.) должны были стать Армения, Грузия, Азербайджан, Турция и Россия. Само собой разумеется, что при успешной реализации этого предложения значительно возрастет влияние Турции в Южном Кавказе, что соответственно будет способствовать усилению роли НАТО в нашем регионе и, безусловно, самих США. Естественно, что подобный ход развития событий отнюдь не в интересах нашего стратегического партнера и дружественной нам страны - Российской Федерации, потому что подобное развитие событий значительно ослабило бы влияние России в нашем регионе. В случае столь неблагоприятного хода развития ситуации единственным фактором влияния РФ в Южном Кавказе, пожалуй, останется лишь Республика Армения, где сосредоточена единственная в регионе Российская военная база. Если мы будем учитывать подобную возможную логику развития процессов, то она подсказывает: в переговорном процессе по мирному урегулированию нагорно-карабахского конфликта Республика Армения должна и впредь настаивать на реализации трех известных принципов, о которых наши власти не раз заявляли и которые нашли место также и в совместном заявлении президентов стран-сопредседателей Минской группы ОБСЕ от 10 июля 2009 года. В этом контексте весьма актуальной представляется та часть 6-го принципа, нашедшего место в заявлении трех президентов, где говорится о том, что международные гарантии безопасности Нагорного Карабаха предполагают также проведение миротворческих операций. Понятно, что если для России появление в регионе каких бы то ни было миротворческих сил, кроме сил

ОДКБ, нежелательно, то для Ирана любое другое решение будет вовсе неприемлемо. В связи с этим в мирном урегулировании конфликта весьма актуализируется роль Исламской Республики Иран. Вне всяких сомнений, что Иран предпримет все необходимое, чтобы исключить возможность появления миротворческих сил каких бы то ни было государств, за исключением Российских, в зоне армяно-азербайджанского военного противостояния, которое имеет место в непосредственной близости от армяно-иранской и ирано-азербайджанской границы, протянувшейся не на одну сотню километров.

Именно в комплексе этих вопросов и должна быть определена стратегия переговорного процесса дипломатии нашей страны. Думаю, понятно, что из предложенных принципов мирного урегулирования 6-й принцип - один из ключевых. Возможное применение этого принципа одинаково важно как для Армении и Азербайджана, так и для России, Турции и Ирана. Трудно переоценить, насколько ответственно сделать правильные выводы из сложившихся политических реалий.

Что касается призыва к “будущему определению окончательного юридического статуса Нагорного Карабаха, путем юридически обязывающего выражения воли”, нашедшего место в заявлении трех президентов, то здесь нам в своем арсенале необходимо полностью использовать публичные высказывания министра иностранных дел России Сергея Викторовича Лаврова относительно юридических обоснований признания независимости Южной Осетии и Абхазии. Так, 11 сентября 2008 г. в интервью, данном им авторитетной польской газете “Gazeta Wobocza”, он заявил: “Южная Осетия и Абхазия фактически являлись независимыми странами согласно Закону СССР от 3 апреля 1990 г.”. Указанное утверждение обязывает нас развернуть серьезную пропагандистскую работу, чтобы как руководители стран-сопредседателей Минской группы, так и международное сообщество, были бы хорошо осведомлены о деталях вышеупомянутого закона. Так, 3 апреля 1990г. Верховный Совет СССР

принял закон (№- 1409-1) “О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР”. В ст. 3 закона отмечено: “В союзной республике, имеющей в своем составе автономные республики, автономные области и автономные округа, референдум проводится отдельно по каждой автономии. За народами автономных республик и автономных образований сохраняется право на самостоятельное решение вопроса о пребывании в Союзе ССР или в выходящей союзной республике, а также на постановку вопроса о своем государственно-правовом статусе”. Так что армянская сторона должна по каждому удобному поводу заявлять о своей солидарности с подобной принципиальной позицией Сергея Лаврова, сделав это одним из гвоздей нашей дипломатии в ходе переговорного процесса.

Здесь также важно придать публичность обращению влиятельных американских сенаторов от 18 января 1990 года к президенту СССР Михаилу Горбачеву, где, в частности, сказано: “Мы призываем Вас решить проблему (Нагорного Карабаха –А.Г.), которая привела к трагическим событиям, дав право народу Нагорного Карабаха на свободный выбор в соответствии со своими политическими и культурными связями”. Под обращением подписались сенаторы Питер Уилсон, Пол Саймон, Лури Пресслер, Клейборн Пелл, а также основной соперник Джорджа Буша в президентских выборах США 2004 года, демократ Джон Керри. Думаю, что мы должны призвать американского президента, выдвиженца от Демократической партии Барака Обаму уважать позицию сенаторов, во главе с влиятельным демократом Джоном Керри, официально высказанную еще в январе 1990 года.

Тем более уважительного отношения заслуживает принятая единодушно 19 июля 1989 года Комитетом по внешним отношениям Сената США резолюция, выражавшая “поддержку США чаяний народа Советской Армении о мирном и честном урегулировании спора вокруг Нагорного Карабаха”. В резолюции, внесенной председателем сенатского

комитета по иностранным делам Клейборном Пеллом, в частности, отмечалось: “Выступить на двусторонних обсуждениях с Советским Союзом за справедливое урегулирование спора вокруг Нагорного Карабаха, которое честно отразило бы мнение населения этого района”. Здесь очень важно подчеркнуть другой абзац из того же документа, где отмечено: “... вызвав дальнейший рост недовольства (речь о деятельности Комитета особого управления НКАО –А.Г.) среди проживающих армян, *которые составляют подавляющее большинство местного населения*”. Принятая Комитетом по внешним отношениям Сената США по инициативе сенатора Клейборна Пелла резолюция также должна быть использована нашей дипломатией, а также всей государственной пропагандистской машиной в том плане, чтобы нынешнее руководство США осталось приверженной духу официально закрепленной два десятка лет назад позиции Сената США.

Говоря о подходах действующей администрации США к вопросу мирного урегулирования нагорно-карабахского конфликта, считаю необходимым проинформировать сопредседателей Минской группы о том, что мы строго актуализируем следующие положения из выступления вице-президента США Джозефа Байдена, имевшего место 23 июля т.г. в парламенте Грузии: “Как бы трудно это ни было, призываю Вас (имеются ввиду власти Грузии – А.Г.) держать двери открытыми перед абхазами и южно-осетинцами... Это печальный факт, но военного пути к реинтеграции действительно нет. Только у мирной и процветающей Грузии есть перспектива восстановления вашей территориальной целостности, если те, кто живет в Абхазии и Южной Осетии, увидят, что в Грузии они могут быть свободными, а их общины смогут процветать, где они смогут пользоваться автономией в рамках федеральной системы власти, где их жизнь сможет стать гораздо лучше, чем сейчас. Покажите им реальные выгоды от девиза вашей страны: в единстве сила”.

Власти США неоднократно заявляли о своем непоколебимом подходе, принципиальной приверженности к мирному урегулированию вопроса Нагорного Карабаха, а стало быть подход, указанный в выступлении Джозефа Байдена перед парламентариями Грузии, следует обязательно обосновать и сделать в полной мере приемлемым для мирного урегулирования нагорно-карабахского конфликта, при этом предложив сопредседателям Минской группы уважительно отнестись к столь справедливой формуле урегулирования, предложенной Дж. Байденом. В дальнейшем необходимо добиваться, чтобы этот подход нашел бы отражение в обновленном варианте текста Мадридских принципов. Более того, в этом судьбоносном вопросе мы должны выступить с единой, общенациональной позицией, подчеркивая, что любой иной подход в этом деле чреват возобновлением военных действий. При этом следует особо подчеркнуть, что любые иные действия, которые будут иметь место после вышеотмеченных принципиальных оценок, данных в Тбилиси в выступлении вице-президента США, если не будут осуждены, то Азербайджан может это расценить как молчаливое согласие на разрешение проблемы нагорно-карабахского конфликта военным путем. Ведь мы с вами являемся свидетелями того, как президент Азербайджана Ильхам Алиев, не без умысла, как внутри страны, так и за рубежом (в последнее время он выступил в Лондоне в Королевском институте международных отношений Chatham House –А.Г.) систематически делает заявления о решении вопроса Нагорного Карабаха военным путем. И это происходит в том случае, когда 2 ноября 2008 года президентами С.Саргсяном, И.Алиевым и Д.Медведевым была подписана Майендорфская декларация, где подтверждена готовность конфликтующих сторон достичь урегулирования конфликта исключительно мирным путем. Иначе говоря, Алиев публично как бы игнорирует положения этого документа и тем самым принижает роль и значение страны-гаранта подписанной декларации – Российской Федерации в деле урегулирования по Нагорному

Карабаху. Вызывает удивление и то, что на днях министр обороны Азербайджана Сафар Абиев в Баку после переговоров с министром обороны РФ Анатолием Сердюковым заявил: “Если армяно-азербайджанский конфликт не будет урегулирован в мирном варианте, тогда необходимо военное решение ”. К сожалению, это воинственное заявление, противоречащее духу Майендорфской декларации, заверенной со стороны президента Российской Федерации, осталось безответным со стороны министра обороны России. Полагаю, что в ходе переговорного процесса нельзя недооценивать роль и значение Майендорфской декларации, особенно со стороны российского сопредседателя в Минской группе ОБСЕ.

Что касается Франции, а более шире позиции Евросоюза, в деле мирного урегулирования проблемы Нагорного Карабаха, то считаю, что было бы к месту, чтобы наша сторона напомнила своим европейским партнерам по переговорам следующую непреложную истину: всякого рода вмешательство со стороны международных организаций, в особенности ключевых государств Евросоюза и США, которые привели к независимости Косово, если сравнить с дорогой к независимости, которую прошел народ Арцаха (причем эту дорогу арцахцы прошли самостоятельно, без внешнего вмешательства – А.Г.), то с точки зрения международного права признание независимости Нагорного Карабаха куда более обоснованно и неуязвимо, чем признание независимости Косово. Для становления Нагорного Карабаха как государства, в отличие от Косово, не было необходимости формирования новой специальной комиссии Генеральной Ассамблеи ООН по примеру комиссии Ахтисаари, также и не потребовалось ввода миротворческих голубых касок ООН или сил быстрого реагирования НАТО (KFOR –А.Г.), как это также имело место быть в случае Косово. Более того, не помешало бы пустить в обращение отдельные положения из выступления в парламенте Косово вице-президента США Джозефа Байдена, имевшего место 22 мая сего года. Так, вице-президент США в

качестве достижений независимого Косово упомянул такие факторы, которые еще несколько лет назад получили свое решение в Нагорном Карабахе. В частности, Джоозефом Байденом поощрения заслужил факт принятия парламентом Косово 50-и законов. В своем выступлении Дж.Байден также отметил:“... Вы построили дороги, школы, вы создали с нуля министерства и государственные службы, которых раньше не существовало”. Все это на все 100%можно сказать и о Нагорно-Карабахской Республике. “Ваш успех, достигнутый упорным трудом,- продолжил Дж.Байден,- продемонстрировал всему миру, что демократия и независимость Косово являются силой, способствующей установлению стабильности в регионе, и что так будет и дальше”. Пример становления независимости Нагорного Карабаха, полагаю, куда более убедительное свидетельство и подтверждение того утверждения, имевшего место в выступлении Дж.Байдена, что только независимое государство Нагорный Карабах, избравшее путь демократического развития, сделало возможным без содействия мощных внешних международных сил отстоять свою независимость в борьбе с Азербайджаном. Страной, 30-и кратно превосходящей по населению население Нагорного Карабаха, расходующей миллиарды нефтедолларов на свое вооружение и пытающейся решить конфликт военным путем. Более того, все те вопросы, к решению которых Дж.Байден призывал косовцев в своем выступлении, уже ряд лет положены в основу повседневной работы властей Карабаха, составляют ее содержание. В частности, вице-президент США говорит:“Во-первых, мы призываем вас, мы настоятельно просим вас продолжить строительство сильных институтов, которые воплощают ценности, закрепленные в вашей Декларации независимости и вашей Конституции. Эффективность и прозрачность этих институтов будут иметь решающее значение для укрепления доверия к вашему правительству в ближайшие месяцы и годы”. В Нагорном Карабахе на решение этих вопросов в течении ряда лет направлены действенные шаги по государственному

строительству, результаты которых в случае любого беспристрастного мониторинга, убежден, будут очень высоко оценены.

Из выступления Дж.Байдена в Косовском парламенте можно привести и другие постановочные вопросы и цитаты, но и из сказанного можно сделать вывод о том, что усилиями ключевых стран Евросоюза и США Косово, получившее независимость, еще только начинает осуществлять те шаги, которые много лет назад и с еще большим успехом уже реализовал и продолжает это делать Нагорный Карабах. То есть, учитывать эти реалии и при этом навязывать независимому существованию Нагорного Карабаха какую-либо альтернативу, другой статус государственного устройства, мягко выражаясь, будет крайне нелогично.

В совместном заявлении президентов Д.Медведева, Б.Обамы и Н.Саркози нашедшие место второй (придание промежуточного статуса Нагорному Карабаху, гарантирующего безопасность и самоуправление) и четвертый (будущее определение окончательного юридического статуса Нагорного Карабаха путем юридически обязывающего выражения воли) принципы, вокруг которых будут вестись переговоры, будут иметь положительное воздействие, если армянская сторона, интерпретируя их, придаст особое значение, актуальность применительно к урегулированию нагорно-карабахского конфликта исключительно принципиальных оценок, поставленных Дж.Байденом в своем выступлении перед парламентом Косово, имевшем место 22 мая т.г.. Приведение контраргументов этим оценкам будет делом не из легких.

Мы должны также использовать то обстоятельство, что до конца 2009 года страной председателем Евросоюза является Королевство Швеция и в этом вопросе будет важной роль министра иностранных дел Швеции Карла Бильдта, который будучи высоким должностным лицом страны, председательствующей в Евросоюзе, в качестве одной из первоочередных направлений своей деятельности посчитал официальный визит в Грузию, Армению и Азербайджан. И это вновь подтвердило ту степень важности,

которую Евросоюз отводит государствам Южного Кавказа и процессам, протекающим в нашем регионе. Почему особо упоминаю о персоне Карла Бальдта? Потому что именно Карл Бильдт был официальным представителем ЕС на Балканах, когда там воплощались в жизнь Дейтонские соглашения о прекращении огня, разделении враждующих сторон и обособлении территорий, положившие конец гражданской войне в Боснии и Герцеговине 1992-1995гг. Напомню, что положения соглашения были согласованы в ноябре 1995 года на военной базе США в Дейтоне (штат Огайо – А.Г.), подписаны 14 декабря 1995 года в Париже. Карл Бальдт, являясь очевидцем проводимых Хорватией летом 1995 года этнических чисток (тогда после занятия хорватскими войсками Сербской Краины около 300 тысяч сербов стали беженцами, покинули места, где они жили веками), назвал президента Хорватии Франьо Туджмана “военным преступником” наравне с Р.Караджичем. Более того, К.Бильдту хорошо известно, что на момент подписания Дейтонского соглашения в столице Хорватии Сараево проживало от 120 до 150 тысяч сербов. Между тем, сегодня практически сербов там нет. Мы должны аргументировано представить Швеции, председательствующей в ЕС, министру иностранных дел этого государства Карлу Бильдту, что если, не приведи Господь, Нагорно-Карабахская Республика окажется в составе Азербайджана, то ее ждет судьба Сербской Краины, а ее жителей- судьба сербов Сараево. Обстоятельство, которое два армянских государства никогда не допустят, чтобы стало бы возможным. Более того, следует с помощью многочисленных убедительных обоснований представить правду о том, что народ Нагорного Карабаха встал на путь освободительной борьбы, осознавая, что в противном случае его ждет участь армян Нахиджевана, то есть – массовый исход армянского населения из своих исконных территорий, разграбление и уничтожение историко-культурных памятников и ценностей. Необходимо последовательно разяснять, что армянская сторона, подвергаясь разного рода давлению, весьма терпеливо и

последовательно демонстрирует свою подлинную приверженность принципу мирного урегулирования противостояния вокруг Нагорного Карабаха. Для подтверждения истинности сказанного следует подключить к делу множество обоснований и доказательств того, что освободительная борьба народа Нагорного Карабаха была ответом на политику этнических чисток, осуществляемую властями Азербайджана. В связи с этим приведу один примечательный пример из опубликованного в газете “Бакинский рабочий” от 25 июля 2002 г. материала под заголовком “Средства массовой информации должны быть глашатаями правды...” под авторством Гейдара Алиева. Будучи в то время президентом Азербайджанской Республики, Гейдар Алиев на страницах газеты рассказал правду о политике официального Баку в отношении армян Нагорного Карабаха. В интервью Г.Алиев оповещает читателей: “Я говорю о периоде, когда был первым секретарем (имеется ввиду первым секретарем ЦК Компартии Азербайджана – А.Г.) ” и много помогал развитию Нагорного Карабаха. Одновременно я старался изменить там демографию. К примеру, Нагорный Карабах поднимал вопрос об открытии там института, вуза, а у нас все возражали против этого. Я подумал и решил открыть. В итоге азербайджанцев из прилегающих районов мы отправляли учиться не в Баку, а туда... Или, открыв в НКАО большую обувную фабрику, направляли туда азербайджанцев, а число армян сократилось.”

Откровеннее не скажешь. Именно в такой политике, проводимой в те годы, и кроются причины массового исхода более полумиллиона армян из многих десятков армянонаселенных городов и районов Азербайджана. Именно такая политика, направленная на насильственное выживание армянского населения из своей исторической Родины, и привела к национально-освободительной борьбе граждан Нагорного Карабаха за свое национальное самоопределение. Учитывая тот факт, что в современном Азербайджане властями республики проводится политика культа личности Гейдара Алиева, становится вне всяких сомнений, что его сын- Ильхам

Алиев, если, не приведи Господь, Нагорный Карабах окажется в составе Азербайджана, продолжит политику своего отца да еще с большим рвением и ожесточением.

Принимая во внимание все эти реалии, армянская сторона должна настоятельно отстаивать идею признания независимости Нагорного Карабаха, ибо альтернативой независимости – является война. И в условиях этих наглядных и бесспорных реалий, мы считаем, что политика по оказанию давления на Республику Армения с целью принуждения последней отказаться от идеи независимости Нагорно Карабахской Республики, равносильна тому, чтобы взять на себя ответственность за разжигание новой войны в нашем регионе. Таковы объективные реалии нашего времени.

Осознание возможности такого хода развития событий делают настоящей необходимостью задачу по достижению консолидации нашего народа. Любое иное действие, какими бы благозвучными словами оно не обволакивалось, является либо проявлением политической близорукости, если не сказать проявлением невежества, либо тщательно скрываемым предательством национальных интересов. Мы должны изначально исключить подобные проявления.

Защита независимости Нагорно Карабахской Республики, достижение ее международного признания - это наш священный долг, наша общая судьба. Так встанем вместе лицом к тому, что уготовила судьба для Республики Армения.

АРТАШЕС ГЕГАМЯН

Председатель партии

“Национальное Единение”

## ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ. ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՄԵԾ ՊԱՐՏԻԱ

Եվ այսպես, կարելի է առանց չափազանցության ասել, որ ս. ք. սեպտեմբերի 1-ից միջազգային հանրության, համաշխարհային քաղաքականության կենտրոնների ուշադրության կիզակետում են Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունների միջև Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի միջնորդությամբ նախաստորագրած և օգոստոսի 31-ի ուշ երեկոյան հրապարակված հետևյալ երկու արձանագրությունները. «Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Թուրքական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին», և «Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Թուրքական Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների հաստատման մասին»:

Միջազգային այն բուռն արձագանքը, ըստ որում՝ ճնշող մեծամասնությամբ դրական երանգներ ունեցող, որին արժանացան վերը նշված արձանագրությունները, անտարակույս, վկայում են Հարավային Կովկասում ընթացող զարգացումների բացառիկ կարևորության մասին հատկապես ԱՄՆ-ի, Եվրամիության, Ռուսաստանի Դաշնության, ԵԱՀԿ-ի, ԵԽԽՎ-ի, ինչպես նաև ՀԱՊԿ-ի ու ՆԱՏՕ-ի համար:

Ի՞նչ է սա նշանակում: Երկու երկրների նկատմամբ հոգատարության, բարի կամքի դրսևորում: Անշուշտ, այո: Հարավային Կովկասում խաղաղության ու կայունության հաստատմանն ուղղված գործընթացի մեկնա՞րկ: Անկասկած, այո: Եվ, վերջապես, արդյոք կարելի՞ է պնդել, որ Հայաստանի և Թուրքիայի Հանրապետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, ինչպես նաև երկկողմ հարաբերությունների զարգացումն իրենց հիմքում ենթադրում են երկու կողմերից ակնկալվող նույնաբովանդակ հեռանկարային զարգացումներ, ինչպես դա ենթադրվում է արձանագրություններում: Իհարկե, այդպես մտածելը կլիներ անհուսալի և «ոչ» հիմնավոր լավատեսության արտահայտում, եթե չասենք՝ աշխարհաքաղաքական զարգացումներին պարզունակ մոտեցման դասական դրսևորում: Ներկայիս

ժամանակաշրջանում Հայաստան - Թուրքիա դիվանագիտական կապերի հաստատմամբ, երկկողմ հարաբերությունների զարգացմամբ Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական նոր վերադերաբաշխումների սկիզբ է դրվում, խաղարկվում է «Շախմատային Մեծ պարտիա» համաշխարհային քաղաքականության՝ կենտրոնների անմիջական մասնակցությամբ: Եվ միանգամայն բնական էր և սպասելի, որ հայ ու թուրք հասարակությանը ներկայացված նախաստորագրված արձանագրությունները բազմաթիվ հարցեր առաջացրեցին երկու երկրների քաղաքական ուժերի, հանրության ամենալայն շրջաններում: Ըստ որում, երբ փոքր - ինչ խորանում ես առավել շատ քննարկվող հարցերի մեջ, ապա համոզվում ես, որ նախաստորագրված փաստաթղթերը լայն հնարավորություններ են ընձեռում այս գործընթացով շահագրգռված թե՛ Հայաստանի ու Թուրքիայի և թե՛ ԱՄՆ-ի, Եվրամիության ու Ռուսաստանի Դաշնության դիվանագետներին՝ դրանք իրենց աշխարհաքաղաքական շահերին լավագույնս ծառայեցնելու համար: Առաջնորդվելով այս տրամաբանությամբ՝ փորձենք ավելի մանրակրկիտ վերլուծել արձանագրություններում տեղ գտած առավել վիճահարույց դրույթները:

ՀՀ գործող իշխանություններին որպես արմատական ընդդիմություն դիրքավորվող Հայ Ազգային Կոնգրեսը նախաստորագրված արձանագրությունների հրապարակման հաջորդ իսկ օրը՝ սեպտեմբերի 1-ին, հանդես եկավ չորս կետից բաղկացած հայտարարությամբ: Ուշագրավ է, որ ՀԱԿ-ից հաշված ժամեր պահանջվեցին, որպեսզի այդ երկու լրջագույն փաստաթղթերին՝ «Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Թուրքական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Թուրքական Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին», տար շատ բարձր գնահատական: Հայտարարության մեջ, մասնավորապես, տրվում է առանցքային հետևյալ գնահատականը, որը, թերևս, դժվար է վիճարկել. «1.Հայ - թուրքական հարաբերությունների կարգավորումը բխում է երկու երկրների և ժողովուրդների, ինչպես նաև՝ տարածաշրջանային խաղաղության և կայունության շահերից: 2.Հայաստանի և Թուրքիայի միջև

դիվանագիտական հարաբերությունների հաստատման և երկկողմ հարաբերությունների զարգացման վերաբերյալ արձանագրությունները զգալի տեղաշարժ են այդ ուղղությամբ»: Թող ընթերցողի մոտ հանկարծ թյուր տպավորություն չստեղծվի, որ իմ կողմից միտումնավոր անտեսվում են ՀԱԿ հայտարարության 3-րդ և 4-րդ կետերը, որոնք իրենց մեջ ներառում են թվացյալ քննադատական երանգներ: Դրանց մանրամասն կանդիդատառնանք և մանրամասն կվերլուծենք՝ ի ցույց դնելով վերջիններիս հեղեղուկ լինելու հիմնավորումները, ըստ որում, հայտարարության մեջ շարադրման ճիշտ նույն հերթականությամբ:

Եվ այսպես, ՀԱԿ հայտարարության 3-րդ կետում գրվում է. «3. Անդառնալի է հայ և թուրք պատմաբանների միջկառավարական ենթահանձնաժողովի ստեղծման մասին դրույթը, որը կասկածի տակ է դնում Հայոց ցեղասպանության իրողությունը»: Նախ, նշեն, դիվանագիտական փաստաթղթերում, միջազգային իրավունքի և, ընդհանրապես, իրավական ուժ ունեցող ցանկացած փաստաթղթում շատ է կարևորվում յուրաքանչյուր դրույթի ճշգրիտ ներկայացումը: Հիշո՞ւմ եք թևավոր դարձած նախադասությունը՝ գնդակահարել չի կարելի ներել: Ահա նրանից, թե որտեղ կդրվի ստորակետը՝ դրանից էլ կախված է կլինի մարդու կյանքը: Ինչևէ, հայտարարության 3-րդ կետում կոնգրեսականները, անկասկած, միտումնավոր խեղաթյուրված են ներկայացնում Հայաստանի Հանրապետության և Թուրքական Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրության հետևյալ դրույթը. «Իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված երկխոսություն պատմական հարթության մեջ, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար»: Ինչո՞ւ են կոնգրեսականներն իրենց հայտարարության տեքստում խեղաթյուրել այս չափազանց կարևոր դրույթը: Միգուցե՞ նրանք քաջ գիտակցում են, որ խեղաթյուրված դրույթը երբեք չի կարող ստվեր զցել հայտարարության մեջ արձանագրված առաջին երկու գնահատականների վրա, հետոն էլ լավ հասկանում են, որ պետք է արմատական ընդդիմադիրի կեցվածքն ամեն գնով պահպանել: Էլ չասենք, որ

ինչպե՞ս կարող էին նրանք հակադրվել այդ արձանագրությունների բովանդակությանը, որոնք լույս աշխարհ են եկել ԱՄՆ-ի կողմից թափված մեծ ջանքերի արդյունքում: Մինչդեռ վերը հիշատակված դրույթի բացառիկ կարևորությունը դժվար է գերազնահատել, և հիմնավորեն, թե ինչո՞ւ: Այսպես, ժամանակակից Թուրքիայի մեծագույն գրող Օրհան Փամուկը 2005 թ. փետրվարի 6-ին հարցազրույց էր տվել Ցյուրիխի “Tages-Anzeiger” թերթին: Թղթակցի հարցերից մեկին պատասխանելիս, Փամուկն ասել էր. «Այս հողի վրա (ի նկատի ունի Թուրքիան - Ա.Գ.) սպանվել են 30 հազար քրդեր և մեկ միլիոն հայեր, բայց ինձանից բացի ոչ ոք չի համարձակվում այդ մասին խոսել»: Արդեն իսկ փետրվարի 18-ին Կայսերի քաղաքի դատախազությունը հանդես էր եկել հայտարարությամբ, որտեղ ասված էր՝ գրողին մեղադրանք կներկայացվի «թուրքական ազգին, թուրքական զինված ուժերին և Թուրքիային ամբողջությամբ անհիմն զրպարտելու համար»: Քրեական գործը հարուցվել էր 2005 թ. հունիսին՝ Քրեական օրենսգրքի 301 հոդվածի առաջին մասի հատկանիշներով: Այնտեղ գրված է, որ թուրքական ազգին, պետությանը կամ պառլամենտին հրապարակայնորեն զրպարտելը քրեական հանցագործություն է և պատժվում է կես տարուց մինչև երեք տարի ազատազրկմամբ: Նշենք, որ Քրեական օրենսգրքի 301 հոդվածը սկզբում կազմված էր երեք մասից: Առաջին մասը վերաբերում էր թուրքական ազգին պարսավելուն (դատապարտելուն) և պետությանն ամբողջությամբ, երկրորդում՝ ասվում էր պետական առանձին հաստատություններին և բանակին զրպարտելու, երրորդում՝ արտասահմանում գտնվող Թուրքիայի քաղաքացու կողմից արված զրպարտանքի մասին: Այդ ձևակերպումները Եվրամիությունում տարակուսանք էին առաջացրել: Իրավապաշտպան կազմակերպությունները հաշվարկել էին զրպարտելու հոդվածով Թուրքիայում իրականացված շուրջ 60 դատավարություններ, որոնց արդյունքում 301 հոդվածով դատապարտվել էին գրողներ, լրագրողներ, մանկավարժներ: Քրեական գործերի ճնշող մեծամասնությունը հարուցվել էր հայկական և քրդական հարցերի առնչությամբ ունեցած ելույթների համար: Այստեղ հարկ է նշել, որ Քրեական օրենսգրքի և պատիժների համակարգի փոփոխությունը եղել է Թուրքիային ներկայացվող Եվրամիության պահանջներից մեկը: Ուշագրավ է, որ 2006 թ. հունվարի 6-ին Թուրքիայի

արդարադատության նախարար Ջեմիլ Չիչեկը հանդես էր եկել հայտարարությամբ, որից հետևում էր, որ Փամուկը պետք է ներողություն խնդրի ժողովրդից և այդ ժամանակ նրա դեմ հարուցված քրեական գործը կկարճվի: Ըստ որում, նախարար Չիչեկը Փամուկի հայտարարությանը իրավական և ոչ մի գնահատական չէր տվել: Հենց այդ նույն օրերին թուրքական մամուլում լրատվություն սպրդեց այն մասին, որ այն ժամանակվա արտաքին գործերի նախարար Աբդուլլահ Գյուլը դատապարտում է Փամուկի դեմ իրականացվող հետապնդումները, որպես երկրի նկարագիրն արատավորող և նրա փառքին վնաս պատճառող: Հունվարի 22-ին Թուրքիայի արդարադատության նախարարությունը հաղորդագրություն էր տարածել առ այն, որ Փամուկի գործը վերադարձվել է Ստամբուլի դատարան, իսկ մեկ օր անց հայտարարվեց, որ գրողի գործը փակված է: Նշեն նաև, որ Փամուկի դեմ քրեական հետապնդումները դեռ չսկսված, գրողի պաշտպանությամբ հանդես էին եկել աշխարհի խոշորագույն ժամանակակից գրական գործիչներ Ջոն Ապդայկը, Ժոզե Սամարագոն, Գաբրիել Գարսիա Մարկեսը, Գյունթեր Գրասը, Կարլոս Ֆուլենտեսը, Ումբերտո Էկոն, Խուան Գոյթիսոլոն, որոնք թուրքական իշխանություններին ուղղված համատեղ նամակում խնդրել էին դադարեցնել Փամուկի դեմ կազմակերպված հետապնդումները: Ամենևին էլ պատահական չէ, որ այսքան մանրամասն անդրադարձա այս պատմությանը, քանզի մենք պետք է տեղեկացված լինենք, թե Թուրքիայում անգամ իսկ Հայոց Ցեղասպանության պատմական իրողությունը հիշատակելու համար ինչպիսի տխուր ողիսական է ունեցել աշխարհահռչակ թուրք գրող Օրհան Փամուկը՝ Մեծ մտավորականը, որը 2006 թ. գրականության ոլորտում արժանացավ Նոբելյան մրցանակի:

Թուրքիայում Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ուղղված շարժման մեկ այլ օրինակ էլ հիշատակեն: Այսպես, 2008 թ. դեկտեմբերի 15-ին պրոֆեսորներ Ահմետ Ինսելը, Բաշկին Օրանը, լրագրողներ Չենգիզ Աքտարը, Ալի Բայրամօղլուն և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ, լրագրողներ, հասարակական 200 գործիչներ [www.ozurdiliyourz.com](http://www.ozurdiliyourz.com) ինտերնետային կայք-էջում տեղադրել էին հանրագիր, որտեղ գրված էր. «Իմ խիղճը չի կարող հաշտվել, որ Մեծ աղետը, որին 1915 թ. Օսմանյան

կայսրությունում ենթարկվեցին հայերը, բախվում է անտարբերության և ժխտման: Ես չեմ կարող հաշտվել նման անարդարության հետ: Ես կարեկցում եմ իմ հայ եղբայրների և քույրերի ապրումներին ու դժբախտությանը և նրանցից էլ եմ խնդրում ներողություն» («Моя совесть не может примириться с тем, что Великая катастрофа, которой подверглись армяне Османской империи в 1915 году, сталкивается с безразличием и отрицанием. Я не могу смириться с такой несправедливостью. Я сочувствую переживаниям и горю своих армянских братьев и сестер, и прошу и у них прощения»): Հանրագրի հրապարակումից հետո դեռ 24 ժամը չլրացած՝ դրա տակ ստորագրություններ էին դրել ավելի քան 8000 մարդ, իսկ 2009 թ. հունիսի 13-ի դրությամբ հանրագրի տակ ստորագրել էին ավելի քան 30 հազար մարդ՝ տաքսու վարորդներ, ուսուցիչներ, թուրքիայի Ազգային Մեծ ժողովի պատգամավորներ... Այս պարագայում, եթե մենք հրաժարվում ենք «իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգմանն ուղղված երկխոսություն պատմական հարթության մեջ», արդյո՞ք դրանով չենք դավաճանում 30 հազարից ավելի թուրքիայի այն քաղաքացիներին՝ մտավորականներին, մանկավարժներին, շարքային քաղաքացիներին, ուժեր, առանց չափազանցության, վտանգելով իրենց կյանքը «կարեկցում եմ հայ եղբայրների և քույրերի ապրումներին ու դժբախտությանը և նրանցից էլ եմ խնդրում ներողություն»: Արդյո՞ք մենք խոհեմություն դրսևորած կլինենք թուրք հասարակության այն ավելի քան հարյուր հիսուն հազար ներկայացուցիչների նկատմամբ, ուժեր հավաքվել էին Հրանտ Դինքի մահվան սգո արարողության ժամանակ՝ վեր խոյացնելով պաստառներ, որոնց վրա գրված էր՝ «Մենք Հրանտ Դինք ենք», «Մենք էլ ենք հայ»: Մի՞թե այդ մարդիկ, դեռ մինչև այս երկու նախաստորագրված արձանագրությունների հրապարակումը, չեն ցուցաբերել իրենց պատրաստակամությունը մեզ՝ հայերիս հետ արդեն իսկ հեռակա կարգով սկսել «իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգմանն ուղղված երկխոսություն պատմական հարթության մեջ»: Ի՞նչ, մերժե՞նք այդ պատրաստակամությունը, որը նրանց համար հղի է վտանգներով ժամանակակից թուրքիայում, նետե՞նք նրանց թուրք ազգայնականների գիրկը, ուժեր մինչև օրս յուրաքանչյուր հայի մեջ թշնամի

են տեսնում: Ի՞նչ, ուրախությո՞ւն պատճառենք նրանց, որ չարախնդան, հեզնեն, ասելով՝ տեսեք, հայերը ձեզ հետ անգամ իսկ խորշում են խոսել, արհամարհում են ձեզ, իսկ դուք հայցում եք նրանց ներողամտությունը: Եկեք թուրքական այսօրվա իրողություններին սթափ նայենք և սուր անկյուններից դիվանագիտական շրջանցումներ չանենք: Այսպես, ճիշտ վերջերս Թուրքիայում անցկացված սոցիոլոգիական հարցումներից պարզվել է, որ հարցվածների 70%-ը դեմ է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ու սահմանի բացմանը: Ուրեմն, նման իրավիճակում ո՞րն է մեր անելիքը՝ երկխոսությունը մերժելով մեզնից վանե՞նք հարցվածների այն 30%-ին էլ, որոնք կողմ են դիվանագիտական կապերի հաստատմանը, սահմանի բացմանը, թե՞, ընդհակառակը, օգտագործելով արձանագրության այդ դրույթը թուրք ժողովրդին լիարժեքորեն զինենք 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանությունը հաստատող անվիճարկելի փաստերով:

Նախաստորագրված արձանագրության այս դրույթի ընդունումը, միջազգային քաղաքականության կենտրոնների ներգրավմամբ, հայկական կողմին հնարավորություն կընձեռի թուրքական իշխանությունների առաջ հարց բարձրացնել առ այն, որ հարկ է Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածում կատարել այնպիսի լրացումներ, որոնք կվերացնեն ցանկացած խոչընդոտ անկաշկանդ իրականացնելու «պատմական հարթության մեջ երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցմանն ու առաջարկների ձևակերպման համար»: Կարծում են, բերված հիմնավորումները բավարար են եզրակացնելու համար, որ սեպտեմբերի 1-ի ՀԱԿ-ի հայտարարության 3-րդ կետը զուրկ է որևէ հիմնավորումից:

Հիմա անդրադառնանք ՀԱԿ – ի հայտարարության 4-րդ կետին, որտեղ ասվում է. «4. Մտահոգություն է հարուցում երկու երկրների խորհրդարանների կողմից նշված փաստաթղթերի վավերացման պայմանը, որը Սերժ Սարգսյանին հնարավորություն է տալիս ենթահանձնաժողովի ստեղծման պատասխանատվությունը կիսել խորհրդարանի հետ, իսկ

Թուրքիային՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծված չլինելու պատճառաբանությամբ ձգձգել հայ-թուրքական սահմանի բացումը»:

Այս պնդման առաջին մասը, վերը բերված հիմնավորումների լույսի ներքո, կարելի է ճիշտ հակառակ իմաստով մեկնաբանել, և դա կլինի արդարացի: Այսինքն, եթե ասենք, որ Սերժ Սարգսյանը, Ազգային ժողովին մասնակից դարձնելով նախաստորագրված արձանագրությունների վավերացման գործընթացին, ըստ էության, խորհրդարանի հետ կիսում է ոչ թե պատասխանատվությունը, այլ՝ դափնիները: Ակնհայտ է, որ այդ դրույթի (պատմական հարթության մեջ երկխոսության) ուժի մեջ մտնելու հետ, Հայաստանի դիվանագիտության կողմից համակարգված աշխատանք կատարելու դեպքում, մենք կկարողանանք Հայոց Ցեղասպանության ճանաչման կողմնակիցների, ապաշխարիության ճանապարհն ընդունողների բանակը հազարապատկել: Չէ՞ որ հայերիս համար առավել կարևոր է, որ Օսմանյան կայսրությունում իրագործված հայերի ցեղասպանության փաստն առաջին հերթին ճանաչեն թուրքական իշխանությունները և դա անեն ոչ թե այս կամ այն երկրի ճնշումների ներքո (ճնշումներ, որոնք, ավա՛ղ, առանձին պետությունների կողմից օգտագործվում են սեփական նպատակներին հասնելու համար), «այլ պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով»: Այսքանը՝ քաղաքական գնահատականների առումով: ՀԱԿ-ի սույն պնդմամբ հրապարակ է գալիս զավեշտալի մի իրողություն: Արդեն շուրջ երկու տարի է, ինչ Լևոն Տեր-Պետրոսյանն ու նրա կողմնակիցները հայտարարում են Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի վերահաստատման արդիականության մասին: Եվ հիմա պարզվում է, որ նրանք այդ Սահմանադրությունն էլ մակերեսորեն գիտեն, այլապես իրենց հայտարարության 4-րդ կետում չէին քննադատի դրույթ, որը սահմանադրական պահանջ է: Պարզեցնեն միտքս. ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ «Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ... 2) վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը», այդ նույն ՀՀ Հիմնական օրենքին համաձայն: Այնտեղ նաև գրված է. «Ազգային ժողովի վավերացմանը ենթակա են այն միջազգային

պայմանագրերը՝ ա) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ կամ նախատեսում են պետական սահմանի փոփոխություն»։ Կարծում եմ, մարդ պետք է առնվազն հիվանդ երևակայություն ունենա, որպեսզի նախաստորագրված արձանագրություններում չնկատի, որ դրանց բովանդակությունն ունի ընդգծված քաղաքական բնույթ։ Այսքանից հետո ականայից հարց է ծագում՝ Հայաստանում այդ ի՞նչ սահմանադրական կարգերի վերականգման համար էին պայքարում, ժողովրդին ոտքի հանում, երբ անգամ իսկ իրենք էլ սահմանադրական նման կարևոր պահանջներից անտեղյակ են։ Ինչպես կասեր իմ լատինացի հին բարեկամը՝ «O tempora! O mores!».

Շարունակելով հնչած արձագանքների վերլուծությունը, կարծում եմ, տեղին կլիներ նաև անդրադառնալ հայ - թուրքական հարաբերություններին առնչվող Լևոն Տեր-Պետրոսյանի մոտեցումներին։ Այսպես, 2008 թ. սեպտեմբերի 15-ի հանրահավաքում ցեղասպանության և հայ - թուրքական հարաբերությունների մասին խոսելիս ԼՏՊ-ն ասել էր. «...Հայաստանը համարում է, որ 1915 թվականին տեղի ունեցածը ցեղասպանություն է, իսկ Թուրքիան դա չի ընդունում։ Այլ կերպ ասած, համաձայնում ենք, որ տեսակետները տարբեր են, և մեր հարաբերությունները կառուցում ենք ահա այս անհամաձայնության հիման վրա։ Տվյալ դեպքում այս հարցը չի խանգարում հայ - թուրքական հարաբերությունների մնացյալ հարցերի կարգավորմանը»։ Հիմա միասին տրամաբանենք, թե մոտեցումներից որ՞ն է Հայոց Ցեղասպանության ուրացում։ Այն, ինչ տեղ է գտել Հայաստանի Հանրապետության և Թուրքիական Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունում՝ պայմանավորած «պատմական հարթության մեջ երկխոսության» դրույթի հե՞տ, թե՞ ՀԱԿ-ի առաջնորդի կողմից հնչեցված մոտեցման մեջ։ Արդյո՞ք ակնհայտ չէ, որ նման դիրքորոշումը ոչ այլ ինչ է, քան հայ - թուրքական միջպետական հարաբերությունների հաստատումից հետո Հայոց Ցեղասպանության հարցերը մոռացության մատնելու միջոց։ Չե՞ որ ԼՏՊ-ն, կրկնեմ, պարզ և հրապարակավ հայտարարում է. «...Հայաստանը համարում է, որ 1915 թվականին տեղի ունեցածը ցեղասպանություն է, իսկ Թուրքիան դա չի ընդունում ... և մեր հարաբերությունները կառուցում ենք ահա այս

անհամաձայնության հիման վրա»: Մեկնաբանությունները թողնում ենք ընթերցողներին: Ասել կուզի՝ Հայաստանի Հանրապետությունը հաշտվում է այն մտքի հետ, որ թուրքական կառավարությունը երբևէ չի ճանաչի Հայոց Ցեղասպանության փաստը: Իսկ այս պարագայում ակնկալել, որ որևէ երկիր պետք է ճանաչի և դատապարտի այն, առնվազն միամտություն կլինի:

Ինչ վերաբերում է ՀԱԿ-ի հայտարարությունում տեղ գտած այն մտահոգությանը, որ նախաստորագրված արձանագրություններն իրավական ուժ կստանան համապատասխան խորհրդարանների վավերացումից հետո, ապա, այո, այս դրույթը մեր կարծիքով էլ «հնարավորություն է տալիս... Թուրքիային՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծված չլինելու պատճառաբանությամբ, ձգձգել հայ - թուրքական սահմանի բացումը»: Այս հարցում Հանրապետության առաջին նախագահը միանգամայն իրավացի է: Ավելին, նա երիցս ճշմարիտ էր, երբ վերը հիշատակած հանրահավաքում ասել էր. «... դժբախտաբար, հայ - թուրքական կարգավորման գլխավոր խոչընդոտը նույնիսկ Ցեղասպանության հարցը չէ, այլ Ղարաբաղյան հակամարտության առկայությունը»:

Այստեղ տեղին կլինի խնդրո առարկայի շուրջ որոշակի պարզաբանումներ տալ, որոնց հայ քաղաքական գործիչներից և ոչ ոք, բացառությամբ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Վաղարշակ Հարությունյանի, իր կատարած վերլուծություններում այդպես էլ չի անդրադարձել: Ինչո՞ւմն է խնդիրը: Թուրքիայի և առաջին հերթին Արևմուտքի համար խիստ կարևոր է, որ լինի հայ -թուրքական բաց սահման, որ Թուրքիան կարողանա ճանապարհային ուղիղ հաղորդակցություն հաստատել մինչև Կասպից ծով: Դա նրանց հնարավորություն կընձեռի զգալիորեն ուժեղացնել ադրբեջանա - թուրքական ռազմաքաղաքական ներկայությունն այդ տարածաշրջանում: Դա էլ իր հերթին ավելի դյուրին կդարձնի Թուրքիայի տարածքով մերձկասպյան հանրապետությունների, Կասպից ծովի ընդերքի նավթագազային պաշարները Եվրամիության երկրներ, ինչպես նաև՝ Սիրիա և Իսրայել տեղափոխել: Այդ պարագայում, թե որքանո՞վ կբարձրանա Թուրքիայի կշիռը Հարավային Կովկասի տարածաշրջանում, ինքնին հասկանալի է. “Nabucco” խողովակաշարի ճակատագիրն էլ կորոշվի հոգուտ թուրք - ադրբեջանական դաշինքի:

Ձարգացումների նման պայմաններում Բաքու - Թբիլիսի - Ջեյհան նավթամուղն էլ վերջապես երաշխավորված կլինի տարեկան կտրվածքով 50 մլն տոննա նավթ հասցնել Միջերկրական ծովի այդ նավահանգիստ, այնտեղից էլ՝ դեպի Եվրոպա ու Իսրայել: Իսկ այս ամենը հնարավոր կլինի իրականացնել միայն Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման պարագայում և հայ - ադրբեջանական խաղաղության, դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո՝ երկկողմ հարաբերությունների զարգացման համընդհանուր պայմանագրի կնքման արդյունքում: Ըստ որում, ամենևին էլ պատահական չէ, որ ուժի արևմտյան միջազգային կենտրոնների ներկայացուցիչները, հայ - թուրքական հարաբերությունների կարգավորումը թեպետ անմիջականորեն չկապելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հետ, շարունակաբար նշում են, որ այդ երկու գործառույթները պետք է զուգահեռաբար ընթանան: Ավելին, շեշտում են, որ հայ - թուրքական հարաբերությունների կարգավորումը զգալիորեն կլիցքաթափի մեր տարածաշրջանում լարվածությունը, ինչն էլ իր հերթին դրականորեն կանդրադառնա հայ - ադրբեջանական հարաբերությունների կարգավորման վրա: Իսկ Թուրքիայի ղեկավարությունը, հատկապես վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը և արտգործնախարար Ահմեդ Ղավուբօղլուն գրեթե ամեն օր իրենց հայտարարություններում հայ - թուրքական հարաբերությունների կարգավորումը ուղղակիորեն պայմանավորում են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմամբ:

Բնականաբար, նման ճանապարհով գործառույթների զարգացումը կհանգեցնի մեր տարածաշրջանից Ռուսաստանի Ղաշնության, եթե ոչ դուրս մղմանը, ապա Հարավային Կովկասում նրա դերակատարության և ազդեցության զգալի անկմանը: Ղա նաև կբերի Իրանի Իսլամական Հանրապետության մեկուսացմանը, մեր տարածաշրջանում և Կենտրոնական Ասիայում իրականացվող տնտեսական խոշոր ծրագրերից նրա դուրս մղմանը: Ծրագրեր, որոնց իրագործումն ապահովելու համար անհրաժեշտ կլինի կյանքի կոչել նաև ռազմաքաղաքական որոշակի նախագծեր: Թերևս, սրա լույսի տակ պետք է դիտարկենք այն, որ ԱՄՆ-ը և Ադրբեջանը շատ ակտիվ համագործակցում են «Կասպյան պահապան» («Каспийский страж»,

“Caspian Guard Initiative”) ծրագրի շրջանակում: Մասնավորապես, ԱՄՆ-ը Ադրբեջանին և Ղազախստանին հատկացրել էր 130 մլն դոլար, որը պետք է ուղղվեն այդ երկրների ռազմածովային ուժերի արդիականացմանը: Նաև այս իրողությամբ է պայմանավորված այն, որ վերջին շրջանում Կասպյան տարածաշրջանի խնդիրները դարձել են Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հոգածության առանցքային ուղղություններից մեկը: Ավելին, ս. ք. մայիսին ՌԴ-ի նախագահ Դմիտրի Մեդվեդևի ստորագրած «Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ռազմավարությունը մինչև 2020 թ.» («Стратегия национальной безопасности Российской Федерации до 2020 года») փաստաթղթում նշված է, որ Կասպից ծովի ավազանը և Կենտրոնական Ասիան Մոսկվայի համար գերակայություն են, քանի որ «Միջազգային քաղաքականության ուշադրությունը երկարաժամկետ հեռանկարում կենտրոնանալու է էներգապաշարների աղբյուրների տիրապետելուն» («Внимание международной политики в долгосрочной перспективе будет сосредоточено на обладании источниками энергоресурсов»): Այստեղ հարկ է նշել, որ ստեղծված իրավիճակում ՌԴ-ի ու Իրանի դիրքորոշումները տարածաշրջանային զարգացումների հարցում մեծապես համընկնում են, չնայած այն հանգամանքին, որ մերձկասպյան երկրների միջև Կասպից ծովի բաժանման սկզբունքները միմյանցից տարբերվում են: Իրանը պնդում է, որ ծովը բաժանվի ըստ ազգային գոտիների (Иран настаивает на разделе моря по национальным секторам-Ա.Գ.), իսկ ՌԴ-ն՝ կողմնակից է, որ ծովի բաժանումը կատարվի հատակով, իսկ ջուրը գտնվի ընդհանուր օգտագործման տիրույթում: ՌԴ-ին մտահոգել էր նաև այն, որ Ադրբեջանն ու Ղազախստանը մերժել էին Կասպից ծովում միասնական ռազմածովային կառույց՝ «Касфор», ստեղծելու իր գաղափարը: Ի դեպ, նշենք, որ Ադրբեջանը նախ համաձայնել էր, իսկ հետո՝ մերժել Ռուսաստանին: Հարկ է նաև նշել, որ ՌԴ-ի արտգործնախարար Սերգեյ Լավրովը ս. ք. ապրիլին հայտարարել էր, որ Ռուսաստանն ամբողջովին հավանություն է տալիս «Կասպյան Տնտեսական Համագործակցության» կազմակերպություն ստեղծելու գաղափարին: Ավելին, պաշտոնական Մոսկվան ու Թեհրանը հուլիսի 29-ին Կասպից ծովում ու իրանական էենգելի նավահանգստում առաջին անգամ անցկացրին մեկօրյա ծովային

ռազմավարժանքներ՝ «Մաքուր և անվտանգ Կասպին՝ տարածաշրջանային համագործակցություն» նշանաբանով՝ շուրջ 30 ռազմանավերի մասնակցությամբ:

Այս հարցերի շուրջ Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումները ամբողջական ներկայացնելու համար հիշեցնեն, որ վերջերս՝ օգոստոսի 17-ին, Աստրախանում կայացած մերձկասպյան համագործակցությանը նվիրված խորհրդակցությունում նախագահ Դմիտրի Մեդվեդևը իր ներածական խոսքում ասել էր. «Կասպից ծովի հանքային պաշարների նշանակությունը ռեգիոնալ և գլոբալ էներգետիկ անվտանգության տեսակետից հնարավոր չէ գերազնահատել: Օրինաչափ է, որ դրանց յուրացումը և փոխադրումը շոշափում են ոչ միայն մերձկասպյան հինգ պետությունների, այսպես կոչված, կասպյան հնգյակի, այլև՝ արտատարածաշրջանային գործընկերների շահերը, նրանց, ովքեր շահագրգռված են համապատասխան տեսակի պաշարների շահագործման մեջ ... Ես կուզեմայի հատուկ ընդգծել մեր սկզբունքային տեսակետը: Մեզ համար Կասպիայում առաջնային են Ռուսաստանի Դաշնության և մերձկասպյան մյուս պետությունների շահերը: ... Դանդաղ, բայց, այնուամենայնիվ, առաջ են շարժվում Կասպից ծովում անվտանգության ապահովման բազմակողմ համագործակցության նախաձեռնությունները: ... Անհրաժեշտ է անել ամեն հնարավորը Բաքվում փորձագետների հանդիպման արագ գումարման համար, որ առարկայորեն մշակվեին Կասպից ծովում անվտանգության ոլորտում համագործակցության մասին հնգակողմ պայմանագիրը»: Այսինքն, խոսքը գնում է այն մասին, որ Կասպից ծովում անվտանգության ապահովումը պետք է իրականացվի բացառապես մերձծովյան հինգ պետությունների կողմից:

Եթե վերագրյալ հարցերի տեսանկյունից ենք մոտենում խնդրո առարկային, ապա հասկանալի է, թե ինչու են մերձավոր դաշնակիցներ Ադրբեջանն ու Թուրքիան այդչափ շահագրգռված, որպեսզի Լեռնային Ղարաբաղի հայ - ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը ամեն գնով կապեն հայ - թուրքական հարաբերությունների կարգավորման հետ: Նրանք քաջ գիտակցում են, որ այդ հարաբերությունների կարգավորման օգտին իրենց հավանությունն են տվել թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Ռուսաստանը և թե՛ Եվրամիությունը: Ուստի, նրանք կարագացնեն նաև հայ-

ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացը: Թուրքիան ամեն կերպ փորձում է ցամաքային կայուն կապ ունենալ դեպի Կասպից ծով, Նախիջևան, Մեղրի - Ադրբեջանի տարածքով և իր այդ ձգտման մեջ նրան անվերապահորեն աջակցում է ԱՄՆ-ը: Ինչ վերաբերում է հարցի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումներին, ապա, կարծում եմ, կրկնելու անհրաժեշտության կարիքը չկա: Այնպես որ, պետք է համաձայնել ՀԱԿ-ի հայտարարության 4-րդ կետի այն պնդման հետ, որ, այո՛, Թուրքիան Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծված չլինելու պատճառաբանությամբ կարող է Ազգային Մեծ ժողովում ձգձգել վավերացման հարցը և դրանով իսկ հետաձգել թե՛ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման, թե՛ հայ - թուրքական սահմանի բացման հարցերը: Հայկական դիվանագիտությունը, կարծում եմ, հետևողական աշխատանք կծավալի շահագրգիռ այն երկրների շրջանակում, ովքեր հստակ արտահայտել են իրենց դիրքորոշումը Կասպից ծովում անվտանգության ապահովության մասին:

Կարևոր եմ համարում ուշադրություն դարձնել մեկ այլ հանգամանքի վրա ևս: Վերն ասվածի համատեքստում առավել հետաքրքիր է դառնում վերջին շրջանում նկատվող ադրբեջանա - իսրայելական մերձեցումը: Այսպես, ս. թ. հունիսի 28-ին պաշտոնական այցով Բաքու էր ժամանել Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը: Իլիամ Ալիև - Շիմոն Պերես բանակցությունների ժամանակ խոսքը գնում էր ոչ թե տարածաշրջանում խաղաղության հաստատման ուղիների որոնման շուրջ, այլ ընդհակառակը՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց ռազմական արդյունաբերության ոլորտում համագործակցելու վերաբերյալ: Երկու երկրների միջև համաձայնագիր է կնքվել Ադրբեջանում բարձր տեխնոլոգիական գործարանի շինարարության մասին Իսրայելի «Aeronautics LTD» կոնցեռնի կողմից, որը մասնագիտացած է ռազմական տեխնոլոգիաների ոլորտում: Պաշտոնական այցի ժամանակ Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը Ադրբեջանի Օտար լեզուների համալսարանում ունեցած ելույթում հայտարարել էր. «Չնայած օկուպացիային՝ Ադրբեջանի ժողովուրդը պահպանել է իր մշակույթը և լավատեսությունը:... Իսրայելը սատարում է Ադրբեջանի տարածքային

ամբողջականության սկզբունքին: Այն ամենը, ինչ մենք կարող ենք անել՝ դա ձեր տարածքային ամբողջականությունը պաշտպանելն է»: Պաշտոնական Բաքուն իրականացնելով Իսրայելի հետ մերձեցման քաղաքականություն՝ ծածուկ հույսեր է փայփայում, որ ադրբեջանական կողմին կհաջողվի օգտագործել ԱՄՆ-ի Կոնգրեսի հրեական հզոր լոբբին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ադրբեջանաճապաստ լուծման համար: Չմոռանամ նաև հիշատակել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունում 2009թ. հունիսին կայացած նախագահական ընտրությունները մեկնաբանելով, Պերեսը հույս էր հայտնել, որ Իրանի ներկայիս իշխանությունները «կանհետանան»: Ի դեպ, նշենք, որ Իսրայելը ամեն տարի Ջեյհանից գնում է շուրջ 2 մլն տոննա ադրբեջանական բարձրորակ նավթ: Նշված քանակը կազմում է Իսրայելի այդ հումքի տարեկան պահանջարկի 16%-ը:

Հարավային Կովկասում այս բոլոր զարգացումները համադրելիս՝ Հայաստանի համար առավել կարևոր են դառնում մեր ռազմաքաղաքական դաշնակցի և բարեկամի՝ Ռուսաստանի Դաշնության պաշտոնական մոտեցումները Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում և այստեղ հարկ է նշել, որ թե՛ արտգործնախարար Սերգեյ Լավրովը, թե՛ վարչապետ Վլադիմիր Պուտինը և թե՛ նախագահ Դմիտրի Մեդվեդևը խնդրո առարկայի շուրջ տված բոլոր հայտարարություններում ընդգծել են, որ Ռուսաստանի Դաշնությունը կողմնակից է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը և ելակետ է ընդունում այն, որ խնդրի կարգավորման գլխավոր պատասխանատուները հայերն ու ադրբեջանցիներն են: Միաժամանակ քանիցս շեշտվել է, որ պաշտոնական Մոսկվան պատրաստ է սատարել փոխզիջումային այնպիսի պայմանավորվածության, որը ընդունելի կլինի հակամարտության մեջ ներքաշված բոլոր կողմերի համար: Ավելին, հայտարարել է, որ, կողմերի նման համաձայնության գալու դեպքում, Մոսկվան մշտապես պատրաստակամ է դառնալ դրա կատարման երաշխավորը: Սա նշանակում է՝ այն բոլոր շահարկումները, տրտունջները ըստ որոնց «նախաստորագրված երկու արձանագրությունների այս տեսքով վավերացումը կործանարար ազդեցություն և անդառնալի հետևանքների է հանգեցնելու Լեռնային

Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում» կամ էլ «Լավատեսութեան, ինքնիշխանութեան եւ այլ պետութիւններու ներքին գործերուն չմիջամտելու անխախտելիութեան սկզբունքները յարգելու իրենց երկկողմ ու բազմակողմ պարտաւորութիւններու վերաբերեալ կէտով, Չայաստան փաստօրէն կընդունի Արցախը Ատրպէյճանի կազմին ձգելու պարտաւորութիւնը», կամ նպատակ են հետապնդում միտումնավոր նսեմացնել, եթէ ոչ ամբողջությամբ անտեսել ՌԴ-ի դերակատարությունը մեր տարածաշրջանում, կամ էլ խնդրո առարկային չտիրապետելու հետևանք են: Այս տեսակետից առավել կարևոր հնչեղությունն է ստանում Ռուսաստանի Դաշնության Արտաքին գործերի նախարարության Տեղեկատվության ու մամուլի դեպարտամենտի ս. թ. սեպտեմբերի 1-ին տարածած մեկնաբանությունները՝ Չայաստանի և Թուրքիայի միջև երկկողմ հարաբերությունների նորմալացնելու մասին: Այնտեղ ուղղակի գրված է. «Նշում ենք, որ այդ փաստաթղթերում նախատեսված քայլերից ոչ մեկը չի կարող մեկնաբանվել որպես որևէ երրորդ կողմին վնաս հասցնող»: Տվյալ դեպքում, կարծում են, որ ասելով երրորդ կողմ, ի նկատի ունեն ճիշտ նույն Ռուսաստանի Դաշնությունը:

Մտորելով նախաստորագրված արձանագրություններին Չայաստանի քաղաքական ուժերի տված գնահատականների մասին, անդրադառնանք նաև «Ժառանգություն» կուսակցության կողմից սեպտեմբերի 3-ին տարածած հայտարարության մի քանի դրույթներին: Չայաստանի իշխանություններին հայտնելով իրենց վրդովմունքը նախաստորագրված արձանագրությունների նկատմամբ՝ «Ժառանգությունը» հայտարարությունում, մասնավորապես, նշում է. «Դրանց հեռահար նպատակն է պարտադրել Չայաստանին. ա) հետահայաց վավերացնել 20-րդ դարասկզբի թուրք - բուլղարական համաձայնագրերը, որոնք անդառնալի հարված են հասցրել հայ ժողովրդի շահերին, բ) միակողմանի հաշտվել 1915 թ. Ցեղասպանության և Չայրենասպանության, Չայոց Մեծ Չայրենագրկման իրողությունների ու հետևանքների հետ»: Հասկանալի է, որ թուրք - բուլղարական համաձայնագրեր ասելով՝ նկատի ունեն 1921 թ. մարտի 21-ին Մոսկվայում ստորագրված ռուս - թուրքական պայմանագիրը և նույն թվականի հոկտեմբերի 13-ին Չայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի ԽՍՀ-ի և Թուրքիայի միջև կնքված

բարեկամության մասին մյուս պայմանագիրը՝ Կարսի պայմանագիրը: «Ժառանգություն» կուսակցության կողմից այդ պայմանագրերին տրված գնահատականը միանգամայն արդարացի են: Սակայն հարց է առաջանում՝ ի՞նչն էր խանգարում այդ նույն «վրդովմունքը» հայտնել, երբ 2006 թ. դեկտեմբերի 13-ին «Նոյյան տապանը» զետեղել էր մի նյութ, որում, հղում անելով «Մարմարային», մեջբերումներ էին արվել ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի պատասխաններից՝ տված թուրքական «Ջունհուրիեթ» թերթի թղթակցի հարցին՝ արդյոք Հայաստանում ճանաչո՞ւմ են Կարսի պայմանագիրը: Արտգործնախարար Օսկանյանը պատասխանել էր. *«Հայաստանը երբեք պրոբլեմ չի դարձրել Կարսի պայմանագրի իսկության հարցը, որովհետև Հայաստանը մնում է հավատարիմ ԽՍՀՄ-ից ժառանգած բոլոր պայմանագրերին»*, սակայն «Հարցը նրանում է, որ ինքը՝ Թուրքիան, չի հետևում Կարսի պայմանագրի մի շարք հոդվածներին: Օրինակ համաձայն պայմանագրի՝ Թուրքիան 3 արևելյան հարևան երկրներում պարտավոր էր բացառել հյուպատոսությունները: Թուրքիան խախտեց պայմանագրի այդ հոդվածը»: Հարց է առաջանում՝ արդյոք ուշի մե՞ջ է Կարսի պայմանագիրը: Նշենք, անարձագանք մնաց նաև 2006 թ. հունիսի 14-ին “REGNUM” գործակալությունում հրապարակված «Հայաստանը պատրաստ չէ ՆԱՏՕ-ին անդամակցելուն».

- համարում է հանրապետության պառլամենտի փոխխոսնակը» վերտառությամբ նյութը, որտեղ Վահան Հովհաննիսյանը պատասխանելով Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Ֆրենկ Քուկի հարցին, թե այսօրվա Հայաստանին ինչպիսի՞ սպառնալի վտանգներ կան, մատնացույց էր արել Թուրքիային, որը երկար տարիներ է, ինչ Հայաստանին ենթարկում է շրջափակման, իսկ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար դնում է այնպիսի նախապայմաններ, որոնք անհնարին են դարձնում հարաբերությունների լավացումը: Խոսելով նախապայմանների մասին՝ Վահան Հովհաննիսյանն ասել էր. «... և, վերջապես, Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչման պրոբլեմը, որը Հայաստանը պաշտոնապես չի էլ վիճարկել, *քանզի գոյություն ունի Կարսի պայմանագիրը, որը ոչ ոք չի վերանայել*»: Հարցեր են առաջանում նաև այն կապակցությամբ, որ «1915 թ. Ցեղասպանության և Հայրենասպանության, Հայոց Մեծ Հայրենագրկման»

մասին հայտարարում է մի կուսակցություն, որի առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսյանի 2007 թ. օգոստոսի 29-ին Թուրքիայի նորընտիր Նախագահ Աբդուլլահ Գյուլին հղած շնորհավորական ուղերձում «Մեծ Ցեղասպանություն», «Մեծ Հայրենասպանություն» ձևակերպումները իսպառ բացակայում էին: Միաժամանակ այդ նույն ուղերձում Ռ.Յովհաննիսյանը Գյուլին գրում է. «Հույս եմ տածում, որ Ձեր, ինչպես նաև մոտ ապագայում ընտրվելիք Հայաստանի նոր նախագահի պաշտոնավարման օրոք թուրք - հայկական հարաբերությունները կմտնեն ներհայեցողության, հետազոտման, բացահայտման և վերջնական կանոնակարգման որակապես նոր փուլ: Այս ամենը կարող է տեղի ունենալ ոչ միայն բարձր քաղաքագիտության և ստեղծագործական դիվանագիտության շնորհիվ, այլև ապագայի անկեղծ, երկուստեք քննարկման միջոցով՝ խարսխված պատմության համարձակ ու աննախադեպ ընդունման վրա: ... Մեր պետությունների միջև գոյություն ունեցող խոր վիհերը՝ լինեն դրանք ժամանակակից բնույթի, թե՛ Մեծ Հայրենագրկման տխուր ժառանգության արգասիք, պետք է հաղթահարվեն և լուծվեն ճշմարտությամբ, շիտակությամբ, նորընտիր երկու ղեկավարների և նրանց բարյացակամության ու շահագրգիռ համաքաղաքացիների գործակցության միջոցով»: Ինչո՞ւ եմ այսքան մանրամասն մեջբերում անում, որովհետև յուրաքանչյուր քաղաքացու մոտ, որը կընթերցի Թուրքիայի նախագահին ուղղված Ռ. Յովհաննիսյանի շնորհավորական այս ուղերձը, կըմբռնի դրա տոնայնությունը, ինքն իրեն խոստովանի, որ դա իր մոտ գայթակղություն է առաջացրել առաջարկությամբ հանդես գալ, այն է՝ նախաստորագրված արձանագրությունները երկու կողմերի համար էլ շատ ավելի շահեկան կլինեին, եթե դրանց որպես նախաբան կցվեր Գյուլին հղած «Ժառանգության» առաջնորդի ուղերձը: Ուղերձ, որը, անկասկած, մեծապես համահունչ է արձանագրություններում տեղ գտած գնահատականներին և դրույթներին, դրանց ոգուն:

Այս դիտարկումներից ի՞նչ հետևություններ կարելի է անել:

Առաջին. Թուրքիայի ազգայնական կուսակցությունները, լինի դա Ազգային գործողության կուսակցությունը (2007թ. հուլիսի 22-ի պառլամենտական ընտրություններում ստացել է ընտրողների 14,3% քվե, Թուրքիայի Ազգային Մեծ ժողովում ներկայացված է 71 պատգամավորով), թե

Սուսթաֆա Քենալի հիմնած Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (որը 2007 թ. պառլամենտական ընտրություններում դաշինք կազմելով Դեմոկրատական ձախ կուսակցության հետ, ստացել էր ընտրողների քվեների 22% և 112 պատգամավորական մանդատ), լինելով ընդդիմադիր էրդողանի - Գյուլի գլխավորած իշխող «Արդարություն և Ջարգացում» կուսակցությանը, արդեն իսկ հանդես են գալիս հայ - թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված արձանագրությունների սուր քննադատման դիրքերից: Արձանագրությունների մերժումը ի թիվս այլ հարցերի նրանք պայմանավորում են Լեռնային Ղարաբաղը և ազատագրված հարակից տարածքները Ադրբեջանին հանձնելու պարտադիր նախապայմանի բացակայության փաստով: Որպեսզի տպավորություն չստեղծվի, որ Հայաստանում այդ արձանագրությունները բոլորի կողմից անխոս ընդունվում են, հավանաբար, շահագրգիռ երկրների վերլուծաբանների խորհրդով անհրաժեշտ համարվեց «հավասարակշռություն» ապահովելու նպատակով Թուրքիայի պառլամենտի օրինակով, որտեղ պառլամենտական ընդդիմադիր ուժերը դեմ են նախաստորագրված արձանագրություններին, նմանատիպ նախադեպ ստեղծել նաև Հայաստանի Ազգային ժողովում: Հասկանալի է, որ դա հնարավորություն կընձեռի հայ - թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրով առավել շահագրգիռ ուժի միջազգային կենտրոններին սիմետրիկ ազդեցություն ներգործելու համար՝ խնդիր ունենալով երկու երկրների հասարակությունների լայն շրջանակներում կարծիք ձևավորելու առ այն, որ հայ - թուրքական հարաբերությունների կարգավորումից հավասարապես շահելու են (կամ կորցնելու) երկու կողմերը: Ինքնին հասկանալի է, ընթացող գործառույթներում որքան կրքերը շիկանան, այդքան էլ կմեծանա հաշտարար, այս գործընթացներն ուղղորդող երրորդ կողմի՝ ԱՄՆ-ի դերակատարությունը: Եվ ամենևին էլ պատահական չէ այս օրերին արևմտյան դրամաշնորհներից (գրանտներից) սնվող «հետազոտական», «վերլուծական» տարբեր կենտրոնների աճող ակտիվությունը թե՛ մամուլում և թե՛ հեռուստատեսությամբ: Հետաքրքրական է այն իրողությունը, որ այդ բոլոր գրանտակեր «վերլուծաբանները» մեկեն դարձան միակարծիք՝ հայ -

թուրքական հարաբերությունների կարգավորումից շահողը, իբր, լինելու է միայն Ռուսաստանի Դաշնությունը: Հանրությանը միամիտի տեղ դնելով, որպես փաստարկ բերվում է այն, որ ռուսներին ավելի ձեռնտու է մեր տարածաշրջանային հարցերը կարգավորելիս գործ ունենալ Թուրքիայի, քան Արևմուտքի հետ: Կարծես Թուրքիան՝ ՆԱՏՕ-ի անդամ չէ, կարծես Թուրքիան՝ չունի անհագուրդ ձգտում դառնալ Եվրամիության անդամ, կարծես Թուրքիան չէ Ռուսաստանին շրջանցող “Nabucco” ծրագիրը կյանքի կոչելու հիմնական շարժիչ ուժը, կարծես թե արդեն մոռացության է մատնված Թուրքիայի պաշտպանության նախարար Վեժդի Գյունեօղլու ս. թ. հունիսի 4-ին Վաշինգտոնում գումարված ամերիկա - թուրքական խորհրդի 28-րդ նիստի ժամանակ արած այն հայտարարությունը, որ «պետք է ձգտել նրան, որպեսզի Հայաստանը մերձենա Արևմուտքին և ոչ թե Ռուսաստանին ու Իրանին»: Եվ, վերջապես, չլինի՞ թե Ռուսաստանի շահերից էր բխում թուրքական մամուլում հրապարակված խայծը՝ Հայաստանին ներգրավվել “Nabucco” ծրագրի մեջ, որի հրապարակումը զարմանալի զուգահեռությամբ արվեց այն ժամանակ, երբ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն պաշտոնական այցով գտնվում էր Վրաստանում: Մենք, երևում է, թե դեռ պետք է գոհ լինենք մեր «գրանտակեր» անալիտիկներից, որ իրենց այդ պնդման օգտին որպես համոզիչ փաստարկ չեն հիշատակում Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական քարտուղար Հիլարի Բլինթոնի արդեն պարբերական բնույթ կրող հեռախոսազրույցները Հայաստանի և Թուրքիայի ղեկավարության հետ, ինչպես նաև վերջիններիս հետ նրա պարտադիր հանդիպումները միջազգային զանազան համաժողովների ժամանակ:

Ինչ վերաբերում է հաճախակի հնչող այն պնդումներին, որոնց համաձայն Ադրբեջանի և Թուրքիայի հարաբերությունները հայ - թուրքական հարաբերությունների կարգավորմանը զուգընթաց, իբր, լարվում են, ավելին, ունանք անգամ իսկ թուրքական իշխանությունների փոխարեն տրտնջում են, որ ադրբեջանական իշխանություններն աշխատում են Թուրքիայի ընդդիմության հետ և սպառնում են տորպեդահարել “Nabucco” ծրագիրը, ապա նման մոլորությունը հիշեցնում է ռուսական հայտնի ասացվածքը՝ “Заблудились в трех соснах” («Մոլորվել են երեք սոճիների արանքում»):

Այդ բոլորը նմանակումներ, իմիտացիաներ են, և նպատակ ունեն ապակողմնորոշել թե՛ Արևմուտքին և թե՛ Ռուսաստանի Ղաշնությանը: Արևմուտքին՝ սպառնալով, որ ադրբեջանցիները կգնան ռուսների հետ ավելի սերտ համագործակցության և դրանով իսկ կգրկեն եվրոպացիներին իրենց էներգակիրներով մատակարարելը դիվերսիֆիկացնելու հնարավորությունից, ավելին՝ նրանք կլծվեն Ռուսաստանի տարածքից դեպի եվրոպա կառուցվելիք «Յարավային հոսք» գազատարը երկնագույն վառելիքով ապահովելու գործին: Իսկ Ռուսաստանին էլ շահագրգռելով այդ ոլորտում ավելի սերտ համագործակցության հեռանկարով, ակնկալում են, որ վերջինս ճնշումներ կգործադրի իր ռազմաքաղաքական դաշնակցի՝ Յայաստանի Յանրապետության վրա, որպեսզի Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործում գնա միակողմանի զիջումների: Սակայն ադրբեջանական ճիզվիտական այս գործառույթները գոնե Ռուսաստանի մասով, կարծես թե, խափանվեցին: Այսպես, ս. թ. հունիսի 29-ին ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևը մեկօրյա աշխատանքային այցով մեկնել էր Բաքու: Իլիամ Ալիևի հետ ունեցած բանակցությունների արդյունքում ռուսաստանյան Գազպրոմը և Ադրբեջանի պետական նավթագազային ընկերությունը կնքել էին պայմանագիր, ըստ որի 2010 թ. հունվարի 1-ից Ադրբեջանը պարտավորվում է ՌԴ-ին տարեկան կտրվածքով ընդամենը 500 մլն խորանարդ մետր գազ մատակարարել, այն էլ՝ եվրոպային վաճառվող գազի բարձր սակագնով: Այլ կերպ ասած՝ Ադրբեջանն իր այդ պատասխանով, ըստ էության, վիժեցրել էր ՌԴ-ի առաջարկը և պատրաստակամությունը առ այն, որ նա երաշխավորում էր Ադրբեջանի սահմանից եվրոպական սակագներով գնել այս երկրից արտահանվող գազի ամբողջ ծավալը (բացառությամբ այն ծավալը, որը մղվում է Թուրքիա՝ Բաքու - Թբիլիսի - Երզրում գազատարով): Անտարակույս, ՌԴ-ի ղեկավարությունը հասկացավ, թե գազի արտահանման ոլորտում որոնք են Ադրբեջանի իշխանությունների իրական նպատակները, թե որ երկրների հետ է նա պայմանավորում իր հեռանկարային տնտեսական ծրագրերը, ծրագրեր, որոնք պարզորոշ բացահայտում են այդ երկրի աշխարհաքաղաքական իրական կողմնորոշումները:

Կարելի է անդրադառնալ հայ - թուրքական նախաստորագրված արձանագրությունների այլ դրույթներին նույնպես, վերլուծել դրանց վերաբերյալ արված տարաբնույթ մեկնաբանությունները, սակայն հարկ են համարում ուշադրություն հրավիրել մեկ ուշագրավ փաստի վրա: Այսպես, մեր երեք ավանդական կուսակցությունները՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, Ռամկավար Ազատական կուսակցությունը, Սոցիալ - Դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը բոլորն էլ հանդես են եկել նախաստորագրված արձանագրությունների կոշտ քննադատությամբ: Հայտնի է նաև, որ նրանք բավականաչափ ներկայացված են Սփյուռքի հիմնական գաղթօջախներում, որտեղ ունեն որոշակի ազդեցություն: Հայտնի է նաև այն իրողությունը, որ Սփյուռքի և հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում մեծ հեղինակություն վայելող ԱՄՆ – ի Հայկական Համագումարը և Հայ Ընդհանուր Բարեգործական Միությունը տարածած իրենց հայտարարություններում, ըստ էության, անուղղակիորեն հավանության են արժանացրել հայկական դիվանագիտության քայլերը խնդրո առարկայի կապակցությամբ և մասնավորապես դրանց վերջին զարգացումները: Բնավ նման տարբեր գնահատականները՝ կուսակցությունների կողմից արձանագրությունների կոշտ քննադատությունը, դրանց մերժումը, մյուս կողմից հայկական ճանաչված երկու կազմակերպությունների կողմից դրսևորած լոյալությունը տարակուսանք, թյուրըմբռնում են առաջացնում սփյուռքահայության շրջանում: Եթե դա արագորեն չփարատվի, ապա այդ գործառույթները կարող են հանգեցնել այս բարդագույն ժամանակաշրջանում համայն հայության պառակտմանը: Անթույլատրելի շռայլություն, որի առաջը եթե չառնենք, ապա ընթացող հայ – թուրքական բանակցություններում կարող է ուժգին հարված հասցվել հայկական դիվանագիտության դիրքերին, զգալիորեն թուլացնելով պաշտոնական Երևանի դիրքերը: Յուրաքանչյուր կուսակցության, հասարակական կազմակերպության, ցանկացած անհատի կողմից հայտնած տեսակետ, կարծիք նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ արժեքավոր կարող է լինել մի դիտանկյունից՝ եթե դա կօգնի հայկական կողմին նախագուշակել թուրքական կողմի հնարավոր «ծուղակները», անցանկալի վտանգավոր դրսևորումները, բանակցային գործընթացի

ստորգետնյա խութերը: Սակայն, երբ արված քննադատության օգտակարությունը աննշան է վտանգներից նախազգուշացման առումով, բայց աշխարհասփյուռ հայությանը պառակտելու մեծ լիցք է կրում, ապա դա ի սկզբանե պետք է կանխվի: Հայ – թուրքական դիվանագիտական կապերի հաստատման, հարաբերությունների զարգացման գինը երբեք չի կարող հայերիս պառակտումը լինի: Դա անընդունելի է, մերժելի և անթույլատրելի է, և դա պետք է գիտակցեն բոլորը, հատկապես հայկական ավանդական կուսակցությունները, որպեսզի XXI-րդ դարում չստեղծվի մի իրողություն, որի մեջ հայտնվել էր Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքելիս: Կարծում եմ վերը շարադրվածից էլ հնարավոր է եզրակացություն անել, որ երկու երկրների հարաբերությունների զարգացումներով մեծապես պայմանավորված են լինելու ինչպես Հարավային Կովկասում ուժի միջազգային կենտրոնների ազդեցության վերադերաբաշխումները, այնպես էլ Կասպից ծովում ու Կենտրոնական Ասիայում թուրքական ու արևմտյան ազդեցության աճի կամ նվազման հնարավորությունները: Բնական է, որ ոչ տարածաշրջանային երկրների դերակատարության ակտիվացումը Հարավային Կովկասում երբեք ու երբեք չի բխում մեր հարևան և բարեկամ երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետության շահերից: Իրանական կողմը, անշուշտ, գիտակցում է, որ Թուրքիայից Կասպից ծով տարանցիկ ճանապարհի բացման պարագայում որոշակիորեն կմեծանա նաև ՆԱՏՕ-ի դերակատարությունը մեր տարածաշրջանում ու դրա հետ միջնորդավորված կաճի նաև Իսրայելի գործոնը: Իսկ Իրան-Իսրայել լարված հարաբերությունների մասին արդեն իսկ հիշատակել ենք:

Եվ այսպես, մեր օրերում Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղարկվում է գլոբալ, աշխարհաքաղաքական լուրջ տեղաշարժերով հղի «Շախմատային Մեծ Պարտիա»: Հաղթանակի մրցանակային շահագումարն է՝ Կասպից ծովի և Կենտրոնական Ասիայի էներգետիկ հարուստ պաշարների առավել շահավետ գնումն ու դրանց տնօրինումը: Պաշարներ, որոնք չեն կարող անտարբեր թողնել ո՛չ ԱՄՆ-ին, ո՛չ Եվրամիության անդամ երկրներին, ո՛չ Ռուսաստանի Դաշնությանը և ո՛չ էլ Չինաստանին, որը, համոզված եմ, ամենայն ուշադրությամբ հետևում է տարածաշրջանային գործընթացներին և

իր խոսքը դեռ կասի: Իսկ շահաբաժինը, իրոք, տպավորիչ է. Կասպից ծովում բացվել է նավթի ու գազի 20 հանքավայր և հայտնաբերվել են 250-ից ավելի հեռանկարային նավթաբեր հանքավայրեր: Նավթային հանքավայրերի ենթադրվելիք նախագուշակային պաշարները մոտավորապես կազմում են 24-26 մլրդ տոննա: Եթե համեմատելու լինենք համաշխարհային հետազոտված պաշարների հետ, որը 270-ից 400 մլրդ տոննա է, ապա Կասպից ծովի նավթային պաշարները կազմում են համաշխարհայինի 6-7%-ը: Իսկ բնական գազի նախագուշակային պաշարներն այդ տարածաշրջանում կազմում է շուրջ 8300 մլրդ խորանարդ մետր:

Մնում է հուսալ, որ Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը աշխարհաքաղաքական այս «Շախմատային Մեծ Պարտիայից» կկարողանա պատվով դուրս գալ: Օգնել Նախագահին, Հայաստանի Հանրապետության դիվանագիտությանը այս գերպատասխանատու, երկրի համար բախտորոշ ժամանակաշրջանում՝ գործելու հավասարակշռված, շրջահայաց, գիտակցունով, որ թիկունքիդ կանգնած է Հայաստանի, Արցախի և աշխարհասփյուռ ողջ հայությունը, կարծում են, բոլորիս սրբազան պարտքն է:

**Հ.Գ. 1** Ի դեպ, խորհրդանշական է, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության շախմատի հավաքականը ամենահեղինակավոր միջազգային մրցապայքարներում հաղթող է ճանաչվել:

## **Հ.Գ. 2 «ՄԵՆՔ ՆԵՐՈՒՄ ԵՆՔ» ԱԿՆԿԱԼԵԼՈՎ ՁԵՐ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ»**

1965 թ. նոյեմբերի 18-ին Վատիկանի Երկրորդ տիեզերական ժողովի ավարտին (1962 – 1965 թթ.) կաթոլիկ Լեի եպիսկոպոսները հանդես եկան նամակով՝ ուղղված գերմանացի կաթոլիկ եպիսկոպոսներին: Հաշտեցման այդ նամակում կային տողեր, որոնք, առանց չափազանցության, դարձան թևավոր. «Մենք ներում ենք, խնդրում ձեր ներողությունը» (“Мы прощаем и просим прощения”): Լեի հոգևորականները ներում էին գերմանացիներին Երկրորդ աշխարհամարտում սպանված միլիոնավոր Լեի զոհերի համար և ակնկալում, որ գերմանացի կաթոլիկ եպիսկոպոսները, գերմանացի ժողովուրդը ներողություն կխնդրեն Լեի ժողովրդից: Եվ հետագայում այդպես էլ եղավ. գերմանացիները գործնականում ապացուցեցին,

որ մեծն Գյոթեի, Շիլլերի, Բեթհովենի, Վագների արժանավոր ժառանգորդներն են: Ի դեպ, ուշագրավ է, որ այդ պատմական նամակի հեղինակներից մեկը Կարոլ Վոյտիլան էր՝ Հռոմի Հովհաննես Պողոս Երկրորդ պապը, որը 1964 թ. ձեռնադրվել էր Կրակովի արքեպիսկոպոս:

Ակամայից միտք է հղանում՝ միգուցե՞ մեր պատվարժան Նորին Սուրբ Օծություն Տեր-Տեր Գարեգին II Ամենայն հայոց կաթողիկոսը ևս նամակով դիմի չափավոր իսլամականի համարում ունեցող իշխող «Արդարություն և Ջարգացում» կուսակցության առաջնորդներ Էրդողան - Գյուլին, Աբրահամի ժառանգորդ իսլամ դավանող թուրք ժողովրդին (նշենք, որ հայ քրիստոնյաները նույնպես Աբրահամի ժառանգորդներն են - Ա.Գ) հայ քրիստոնյաները թուրք ժողովրդին: Չէ՞ որ հայ - թուրքական նախաստորագրված արձանագրությունների հաստատմամբ մենք՝ հայերս, ըստ էության, հայտնում ենք մեր պատրաստակամությունը՝ ներելու և, բնական է, որ ակնկալում ենք, որ թուրք ժողովուրդը կհետևի իր ավելի քան 30 հազար արժանավոր զավակների օրինակին, ովքեր իրենց հայ «քույրերից և եղբայրներից» 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում կատարված Ցեղասպանության համար հայցել են մեր ներողամտությունը: Նման քայլից հետո, արդեն իսկ Թուրքիայի իշխանությունների հետագա գործողություններից աշխարհի համար պարզ կդառնա, թե որքանով են անկեղծ թուրքական իշխանությունները, երբ միջազգային հարաբերություններում դիրքավորվում են որպես երկու՝ քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների միջև կամուրջ հանդիսացող երկիր: Եվ, վերջապես, Եվրամիության առաջատար երկրների՝ Ֆրանսիայի և Գերմանիայի համար, որոնք դեն են արտահայտվել Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությանը, ինչպես նաև Լեհաստանի իշխանությունների համար, որոնք ջատագովն են այդ անդամակցության, ակնհայտ կդառնա՝ արդյո՞ք ժամանակակից Թուրքիան համապատասխանում է Եվրամիության հիմքում դրված համամարդկային չափանիշներին, թե՞ ոչ:

**Հ.Գ. 3** ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի Միջազգային գործերի Կոմիտեն 2007 թ. հոկտեմբերի 10-ին 27 «կողմ» և 21 «դեմ» ձայների հարաբերակցությամբ ընդունեց № 106 բանաձևը, որտեղ 1915 - 1923 թթ. Օսմանյան կայսրությունում մեկուկես միլիոն հայերի կործանումը որակվում էր որպես Ցեղասպանություն: Այդ բանաձևի ընդունման պարագայում, Կոնգրեսը կոչ էր անում ԱՄՆ նախագահին երկրի արտաքին քաղաքականության մեջ արտացոլել Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ կատարված ոճրագործության փաստը: Փաստաթղթում նշված էր. «Հայկական Ցեղասպանությունը մտադրվել և

իրականացվել էր Օսմանյան կայսրությունում 1915 - 1923 թթ., որի արդյունքում բռնի տեղահանման (դեպորտացիայի) էին ենթարկվել գրեթե երկու միլիոն հայեր, որոնցից մեկուկես միլիոնը՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, սպանվել էին, իսկ հինգ հարյուր հազար ողջ մնացածները դուրս էին շարտվել իրենց տներից, որը հանգեցրեց իրենց պատմական հայրենիքում հայերի ապրելու դադարեցմանը, որտեղ նրանք եղել են 2500 տարի»: Շատ կարևոր է բանաձևում հիշատակված փաստը. «1915 թ. մայիսի 24-ին դաշնային ուժերը՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը» հանդես էին եկել համատեղ հայտարարությամբ, որտեղ անվիճարկելիորեն և պատմության մեջ առաջին անգամ մեղադրել էին այլ պետության՝ «մարդկության դեմ ոճիր» իրականացնելու համար: Բանաձևի համահեղինակներ էին 226 կոնգրեսականներ (բանաձևի նախաձեռնողը հայերիս մեծ բարեկամ, ազգությամբ հրեա Ադամ Շիֆն էր): Ուշագրավ է, որ քվեարկությունից երկու ժամ առաջ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ Կրտսերը հանդես էր եկել հայտարարությամբ, որում նշել էր, որ բանաձևի ընդունումը ամերիկա - թուրքական հարաբերություններին «մեծ վնաս» կհասցնի: Իսկ Բուշի հայտարարությունից ոչ շատ ավելի վաղ նույնաբովանդակ հայտարարություններով հանդես էին եկել ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը և Պենտագոնի ղեկավար Ռոբերտ Գեյթսը: Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի Միջազգային գործերի Կոմիտեն չանսաց նրանց հորդորները և բանաձևն ընդունեց: Դրան հաջորդել էր Կոնգրեսի խոսնակ Նենսի Փելոսիի հայտարարությունը (Փելոսիի անունից այն տարածել էր նրա մամուլի քարտուղարը -Ա.Գ.) առ այն, որ ընդունված բանաձևը ընթացիկ նստաշրջանում կդրվի Կոնգրեսի լիազույնար նիստի քվեարկությանը: Այս ամենին հետևեց ԱՄՆ-ի նորագույն պատմության մեջ աննախադեպ մի գործառույթ, այն է՝ ԱՄՆ-ի նախկին 8 պետական քարտուղարներ՝ Ջեյմսի Քիսինգթերը, Ջորջ Շուլցը, Լոուրենս Իգլբերգերը, Ուորեն Բրիստոֆերը, Ալեքսանդր Ջեյզը, Ջեյմս Բեյքերը, Քոլին Փաուելը, Մադլեն Օլբրայթը (ըստ որում, նրանք պաշտոնավարել են թե՛ Չանրապետական, թե՛ Դեմոկրատական վարչակարգերի օրոք) դիմել էին Կոնգրեսին՝ զերծ մնալ բանաձևի ընդունումից՝ խուսափելու համար ռազմաքաղաքական իրենց կարևորագույն դաշնակից Թուրքիայի հետ հարաբերությունները փչացնելուց: Արդյունքում՝ 106 - թղ բանաձևը չդրվեց քվեարկության: Այստեղ, սակայն, ամենակարևորն այն է, որ հիշատակված և ոչ մի պաշտոնական ուղերձում կասկածի տակ չէր դրվել Չայոց Ցեղասպանության հարցը: Ավելին՝ Ջորջ Բուշը Կոնգրեսին հղած իր նամակում նշել էր. «Մենք խորը ափսոսում ենք հայ ժողովրդի ծանրագույն տանջանքների համար, որոնք սկիզբ առան 1915

թվականից»: Նրա կարծիքով, սակայն, ներկայացված բանաձևը «այդ զանգվածային սպանությունների ճիշտ պատասխանը չէ»:

Կարծում եմ, այս ամենի մասին արժե լրջորեն խորհել, առավել ևս, երբ փորձեր են արվում պարզունակացնել հայ - թուրքական հարաբերություններին վերաբերող նախաստորագրված արձանագրությունները:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ

## ЮЖНЫЙ КАВКАЗ: ВЕЛИКАЯ ШАХМАТНАЯ ПАРТИЯ

Итак, уже можно без преувеличения сказать, что, начиная с 1 сентября сего года, в центре внимания международного сообщества, мировых центров политики находятся предварительно подписанные министерством иностранных дел Армении и министерством иностранных дел Турции при посредничестве Швейцарии и опубликованные 31 августа поздно вечером два следующих протокола: “Протокол об установлении дипломатических отношений между Республикой Армения и Турецкой Республикой” и “Протокол о развитии двусторонних отношений между Республикой Армения и Турецкой Республикой”.

Та бурная международная реакция, причем в подавляющем большинстве позитивного характера, которой удостоились вышеупомянутые протоколы, свидетельствует об исключительной важности протекающих в Южном Кавказе процессов, в особенности, для США, Евросоюза, Российской Федерации, ОБСЕ, ПАСЕ, а также ОДКБ и НАТО. Что это означает? Забота в отношении двух стран, проявление доброй воли? Да, безусловно. Начало процесса для достижения мира и стабильности в Южном Кавказе? Да, несомненно. И, наконец, можно ли утверждать, что установление дипломатических отношений между Арменией и Турцией, а также развитие двусторонних отношений предполагают в своей основе ожидаемое в перспективе одинаковое по содержанию развитие событий между двумя сторонами, как того призывают протоколы? Конечно, думать так – значит впадать в безнадежный и необоснованный оптимизм, а точнее: демонстрировать классический образец упрощенного, примитивного подхода к геополитическим процессам. На нынешнем этапе с установлением дипломатических отношений

между Арменией и Турцией, улучшением двусторонних связей закладываются основы новых геополитических перемен, с перераспределением ролей в Южном Кавказе, при непосредственном участии мировых политических центров силы разыгрывается “Великая Шахматная Партия”. И было совершенно естественно и ожидаемо, что предложенные армянскому и турецкому обществам предварительно подписанные протоколы вызвали множество вопросов у политических сил в обеих странах, у самых широких слоев общества. Причем, когда хоть немного углубляешься в наиболее дискутируемые вопросы, то убеждаешься, что подготовленные документы предоставляют широкие возможности дипломатам и Армении, и Турции, а также США, Евросоюзу, Российской Федерации для их использования в геополитических интересах собственных стран. Придерживаясь этой логики, попробуем более детально проанализировать наиболее оспариваемые положения протоколов.

Позиционирующий себя в качестве радикальной оппозиции действующим властям РА Армянский Национальный Конгресс (АНК) на следующий же день после подписания протоколов, 1 сентября, выступил с заявлением, состоящим из четырех пунктов. Примечательно, что АНК потребовались считанные часы, чтобы дать очень высокую оценку этим двум важнейшим документам: об установлении дипломатических отношений и о развитии двусторонних отношений. В заявлении, в частности, дается та стержневая оценка, с которой трудно не согласиться: “1. Урегулирование армяно-турецких отношений – в интересах двух стран и народов, а также в интересах мира и стабильности в регионе. 2. Протоколы об установлении дипломатических отношений между Арменией и Турцией и о развитии двусторонних отношений являются значительным

продвижением в этом направлении”. Пусть у читателя не возникает вдруг превратного представления о том, что я умышленно обхожу третий и четвертый пункты из заявления АНК, пункты, которые содержат в себе кажущуюся критику. Разберем их, подробно проанализируем, вскрывая шаткость приведенных ими обоснований, причем, в той же последовательности, в какой они изложены в заявлении.

Так, в третьем пункте заявления АНК написано: “Непоправимым является положение о создании межправительственной подкомиссии армянских и турецких историков, которое ставит под сомнение факт Геноцида армян”. Прежде всего замечу, что в дипломатических документах, в любом документе по международному праву, вообще, имеющем юридическую силу, очень важно точное воспроизведение каждого положения. Помните ставшее крылатым выражение: “Казнить нельзя помиловать”? От того, где поставишь в нем запятую, зависит человеческая жизнь. Так или иначе, в третьем пункте “конгрессмены”, несомненно, умышленно извращают следующее положение из “Протокола о развитии двусторонних отношений между Республикой Армения и Турецкой Республикой”: “Реализовать диалог в исторической плоскости между двумя народами, направленный на восстановление взаимного доверия, в том числе с помощью научного беспристрастного изучения исторических документов и архивов для уточнения имеющихся проблем и формулирования предложений”. Почему представители АНК в тексте своего заявления исказили это очень важное положение? Может быть, они хорошо сознавали, что по сути выхолощенное положение протокола никогда не сможет бросить тень на констатированные в их же заявлении первые две оценки, а заодно прекрасно понимали необходимость

сохранения за собой любой ценой имиджа радикальной оппозиции. Уж не говорю о том, что как они могли противиться содержанию армяно-турецких протоколов, которые появились на свет благодаря большим стараниям США? Между тем, исключительную важность вышеупомянутого положения трудно переоценить и вот почему. Так, 6 февраля 2005 года крупнейший современный писатель Турции Орхан Памук в интервью цюрихской газете “Tages-Anzeiger” сказал: “На этой земле (имеется в виду Турция –А.Г.) было убито 30 тысяч курдов и один миллион армян, но никто, кроме меня, не осмеливается об этом говорить”. И тут же, 18 февраля прокуратура города Кайсери выступила с заявлением, в котором было сказано, что писателю предъявят обвинение “за безосновательную клевету в отношении турецкой нации, турецких вооруженных сил и Турции в целом”. В июне 2005 года было возбуждено уголовное дело по признакам части первой статьи 301 Уголовного кодекса Турции. Она гласит, что за публичную клевету в адрес турецкой нации, государства или парламента полагается наказание от полугода до 3 лет лишения свободы. Отметим, что ст. 301 УК Турции первоначально состояла из трех частей. Первая относилась к общим обвинениям в адрес турецкой нации и государства в целом, вторая касалась обвинений отдельных государственных институтов и армии, третья – обвинений, высказанных находящимися за границей гражданами Турции. Эти формулировки вызвали недоумение в Евросоюзе. Правозащитные организации насчитали в Турции около 60 судебных процессов за клевету, в результате которых были осуждены писатели, журналисты, педагоги. Подавляющее большинство уголовных дел было возбуждено в связи с выступлениями по армянскому и курдскому вопросам. Здесь уместно подчеркнуть, что изменение Уголовного

кодекса и системы наказаний стало одним из требований, выдвинутых Евросоюзом перед Турцией. Примечательно, что 6 января 2006 года министр юстиции Турции Джемиль Чичек заявил, что Памук должен попросить прощения у народа и тогда возбужденное против него уголовное дело будет прекращено. Причем министр Чичек не дал какой-либо правовой оценки заявлению Памука. Практически в те же дни в турецкой прессе прошла информация о том, что тогдашний министр иностранных дел Абдулла Гюль осуждает судебное преследование Памука, как порочащее образ страны и наносящее вред ее славе. А 22 января того же года министерство юстиции Турции распространило сообщение о том, что дело Памука возвращено в суд г.Стамбула, а через день было объявлено, что возбужденное против писателя уголовное дело прекращено. Отмечу также, что еще до начала уголовного преследования Памука в защиту писателя выступили крупнейшие современные литературные деятели мира – Джон Апдайк, Жозе Самараго, Габриэл Гарсиа Маркес, Гюнтер Грасс, Карлос Фуэнтес, Умберто Эко, Хуан Гойтисоло, которые в совместном письме турецким властям просили прекратить преследования Памука. Я вовсе не случайно так подробно остановился на этой истории, мы должны быть информированы, что в сегодняшней Турции даже только за упоминание факта Геноцида армян всемирно известный турецкий писатель Орхан Памук имел в своей стране столь грустную одиссею. Великий писатель, удостоенный в 2006 году Нобелевской премии в области литературы.

Напомню еще один пример, связанный с признанием Геноцида армян в современной Турции. 15 декабря 2008 года профессора Ахмет Инсел, Башким Оран, журналисты Ченгиз Актар, Али Байрамоглу и представители турецких

академических кругов, журналисты, всего около 200 общественных деятелей на Интернет-сайте [www.jzurdilyourz.com](http://www.jzurdilyourz.com) поместили послание, где написано: “Моя совесть не может смириться, что Великая Катастрофа, которой в 1915 году подверглись армяне в Османской империи, сталкивается с безразличием и отрицанием. Я не могу смириться с такой несправедливостью. Я сочувствую переживаниям и горю своих армянских братьев и сестер и прошу и у них прощения!”. После опубликования послания не прошло и 24-х часов, как под этим текстом поставили подписи более 8 тысяч человек, а на 13 июня 2009 года количество подписей превысило 30 тысяч: среди подписавших – водители такси, учителя, депутаты Великого Национального собрания Турции... В подобной ситуации, если мы отказываемся “реализовать диалог в исторической плоскости между двумя народами, направленный на восстановление взаимного доверия”, то не предаем тем самым 30 с лишним тысяч тех турецких граждан – интеллигентов, педагогов, рядовых людей, которые, без преувеличения можно сказать, подвергая опасности свою жизнь “сочувствуют переживаниям и горю своих армянских братьев и сестер, и просят и у них прощения”? Проявим ли мы таким образом благоразумие по отношению к более чем ста пятидесяти тысячам представителей турецкого общества, которые собрались на церемонию похорон Гранта Динка, многие из которых несли на руках транспаранты, на которых было написано: “Мы – Гранты Динки!”, “Мы тоже армяне!”? Неужели эти люди, которые еще до опубликования предварительно подписанных армяно-турецких протоколов уже не продемонстрировали свою готовность вместе с армянскими братьями и сестрами заочным образом “реализовать диалог, направленный на восстановление взаимного доверия”. Что? Отвергнем эту их готовность, которая в условиях

современной Турции опасна для них? Оттолкнем их в объятия турецких националистов, которые до сих пор видят в каждом армянине врага? Обрадуем этих националистов, чтобы последние злорадствовали, иронизировали, говоря: “видите –армяне гнушаются даже говорить с вами, презирают вас, а вы взываете к их снисхождению...”

